# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԶ. ՏԱՐԻ ԹԻՒ 1 (1251) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒԱՐ 28, 2006
VOLUME 26, NO. 1 (1251) SATURDAY, JANUARY 28, 2006

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### «ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ ԻՐ 26-ՐԴ ՅԱՂԹԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՆ ՍԵՄԻՆ

***ՏՕՔԹ.Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ***

«Մասիս»ի այս համարը կը կազմէ առաջին թիւը անոր լոյս ընծայման 26-րդ տարուան սեմին:

«Մասիս» ամբողջ քառորդ դար պատուով մատուցելէ ետք իր սրբազան ծառայութիւնը իր ժողովուրդին, հայրենիքին, հայ մշակոյթին, Ազգային Դատի հետապնդման, Արցախի Հանրապետութեան հզօրացման եւ հայրենիք-սփիւռք կապերու առաւել սերտացման կապակցութեամբ, այսօր իր աւանդական այլ նուիրական առաքելութեան ճանապարհին նոր սկիզբ կը սահմանէ իր նոր խոյանքին՝ դէպի լուսաւոր ու արդիւնաշատ ապագայ:

«Մասիս», շրջանաւարտ տարուան 2005, Մարտ ամսուան մէջ, տօնախմբեց իր հրատարակութեան 25-ամեակը, որ ինքնին հանդիսացաւ համազումար գնահատութեան ուժեղ շարժառիթ:

«Մասիս» իր լուրջ քննարկման առարկան դարձուց իր շրջանաւարտած քառորդ դարու փառապանծ անցեալը, ուր, նաեւ, մարդուժի պակասը եւ նիւթական անբաւարարութիւնները, իրենց տխուր անդրադարձով ստուերեցին առաւել արդիւնաբեր դառնալու կոչուած իր կարելիութիւնները:

Ան իր լուրջ մտահոգութեան առարկան դարձուց արդի նոր սերունդի ցոյց տուած անտարբերութեան պարագան հանդէպ հայ մամուլին եւ մշակոյթին: Այսօրուան դրութեամբ, խօսելով մեր գաղութի մասին, եթէ բանանք մեր մամուլի էջերը, հազուադէպօրէն կը հանդիպինք երիտասարդ գրիչներու:

Նոր սերունդներ բնաւ շահագրգռուած չեն հայ մամուլով: Չեն կարդար հայ մամուլը: Չեն հասկնար անգամ իրենց կարդացածը: Անծանօթ թեմաներ են հոն գրուածները: Անգամ՝ չեն ուզեր այդ մասին լսել, միաժամանակ տարօրինակ գտնելով անոր առկայութիւնը: Հայ մամուլը կարդացողները շատ չնչին տոկոս մը կը կազմեն, իսկ այդ չնչին տոկոսը կազմողները միջինէն վեր տարիքի երէցներ են իրաւամբ, որոնց կազմէն անվերադարձ մեկնողները փոխարինողներ չկան, դժբախտաբար: Այս երեւոյթը կը փաստէ, թէ սխալ բան մը կայ, որուն պարզաբանման մօտեցած չունին մամուլը կամ պատասխանատու մարմիններ: Ո՞րն է այդ սխալը: Ու՞ր է թաքնուած ան: Ի՞նչ ընել՝ դարմանելու համար այդ զարտուղութիւնը:

Շար.ը էջ 18

## ՀԱՅԱՍՏԱՆ ԴԱՍՈՒԱԾ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԱՐՀԱՄԱՐՀՈՂ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՇԱՐՔԻՆ

*Մարդկային Իրաւանց Հսկիչ (Human Rights Watch) հեղինակաւոր իրաւապաշտպան կազմակերպութեան 2006 թուականի զեկոյցին մէջ Հայաստանը դասուած է մարդու իրաւունքները արհամարհող երկիրներու շարքին:*

*Տարեկան զեկոյցին մէջ կը յայտնէ, որ թէեւ միջազգային համայնքը 2005 թուականին շարունակեց դրական գնահատել Հայաստանի տնտեսական կատարողականը, կառավարութիւնը չկարողացաւ բարելաւել իր ցուցանիշները՝ մարդու իրաւունքներու ասպարէզէն ներս. «2004 թուականին ընդդիմութեան նկատմամբ գործադրուած ճնշումներու արդիւնքով 2005 թուականին աւելի քիչ հանրահաւաքներ եղան: Ասոր հետեւանքով, կառավարութեան ճնշումները ընդդիմութեան նկատմամբ 2005 թուականին պակաս տեսանելի էին»:*

*Իշխանութիւնները, ըստ զեկոյցի, կը սահմանափակեն հաւաքներ կազմակերպելու՝ մասնաւորապէս ընդդիմութեան հանրահաւաքներու ու ցոյցերու ազատութիւնը. - «2005 թուականին շարք մը առիթներով ոչ կառավարական կազմակերպութիւնները եւ քաղաքական կուսակցութիւնները փորձեցին հանրահաւաքներ կազմակերպել: Ոստիկանութիւնը եւ անյայտ անձինք միջամտեցին, խլեցին ցուցապաստառները, կամ հրահրեցին անկարգութիւններ»:*

*Որպէս օրինակ Human Rights Watch կու տայ Ապրիլի 20-ին տեղի ունեցած «Նոր Ժամանակներ» կուսակցութեան ղեկավար Արամ Կարապետեանի կազմակերպած հանդիպումը Սեւան քաղաքի բնակչութեան հետ: Միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը կը նկարագրէ միջադէպը, երբ անծանօթ մարդիկ սկսած են կռուիլ հանրահաւաքի մասնակիցներու հետ. անոնցմէ մէկը կրակած ու վիրաւորած է համալսարանի ուսանող մը, որ կը մասնակցէր հաւաքին:*

*Human Rights Watch իր զեկոյցին մէջ կ'արձանագրէ նաեւ, որ ոստիկանութեան կալանավայրերուն մէջ մարդոց նկատմամբ*

Շար.ը էջ 4

## ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍ Հ.Բ.Ը.Մ.-Ի ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ

*Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութիւնը 2006ը յայտարարած է 100-ամեակի տարի: Այդ բարեբաստիկ առիթով, Հայրենիքէն ներս ու բոլոր հայ գաղութներու մէջ, սփիւռքահայ մեծագոյն բարեսիրական միութեան դարադարձը պիտի նշուի յոբելինական ձեռնարկներով՝ այլազան ամիսներու ընթացքին:*

*Միութեան Կեդրոնական Վարչութիւնը կազմած է համագաղութային Համադրիչ Մարմին մը, որ Լոս Անճելըսէն օրը օրին պիտի արձագանգէ միութենական բոլոր ելոյթներուն, մամուլով եւ հեռատեսիլի կայաններէն:*

*Այս առիթով, առաջին մամլոյ ասուլիսը տեղի ունեցաւ Յունուար 19, 2006, Հինգշաբթի երեկոյեան ժամը 8:30ին, Միութեան Փասատինայի Ալեք Մանուկեան կեդրոնին մէջ:*

*Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Տօքթ. Գէորգ Քէշիշեան եւ ներկայացուց հարիւրամեակի տօնակատարութեանց յանձնախումբի Գալիֆորնիաբնակ անդամները, որոնք են - Գառնիկ Գարայեան՝ պատուակալ ատենապետ, Փանոս Թիթիզեան՝ ատենապետ, Սարգիս Մինասեան՝ ատենադպիր, Ենովք Պալիկեան՝ գանձապահ, եւ խորհրդականներ՝ Տօքթ. Գէորգ Քէշիշեան, Թորգոմ Փօսթաճեան, Վարդուհի Գոճայեան, Արտա Տրամէրեան եւ Հայկ Մսրլեան: Այնուհետեւ հանգամանօրէն ներկայացուց հրաւէրին ընդառաջող հոգեւոր եւ պաշտօնական անձնաւորութիւններն ու մամուլի, հեռատեսիլի եւ այլ կառոյցներու ներկայացուցիչները:*

*Փանոս Թիթիզեան իր ելոյթով ըրաւ հակիրճ պատմականը Հ.Բ.Ը.Մ.ի եւ անդրադարձաւ Միութեան մտահոգութիւններուն եւ առաջադրանքներուն, եւ ըսաւ. «Անցեալը որպէս աղբիւր ներշնչման, լոյս եւ ուղղութիւն կու տայ շարժելու ներկայ ժամանակներու պահանջքին համեմատ, փրկելու եւ հայ պահելու համար այսօրուան եւ վաղուան սերունդները սփիւռքի թէ Հայրենիքի մէջ»:*

*Ապա նշեց առաջադրանքներ դպրոցաշինութեան, ուսուցիչներու եւ դասագիրքերու պատրաստութեան, երիտասարդ տաղանդներ յայտնաբերելու ձգտող գրական եւ գեղարուեստական մրցաշարքերու, գաղթաշխարհի հայաշատ մեծ քաղաքներու մէջ հայկական տուներ հաստատելու կապակցութեամբ:*

*Ենովք Պալիքեան տուաւ յոբելինական տեղական եւ համագաղութային ծրագրի մանրամասնութիւնները, որ ատենին պիտի յայտարարուի մամուլով եւ հեռատեսիլի կայաններէն:*

*Հուսկ, Համադրիչ Յանձնախումբի անդամները տուին սպառիչ բացատրութիւններ ներկայ թղթակիցներու այլազան հարցերուն:*

## ԷՏՈՒԱՐՏ ԱՐՍԷՆ ՃԵՐԷՃԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ Է ՆԻՒ ՃԸՐԶԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՒՈՐ



**Նորանշանակ դատաւոր Էտուարտ Արսէն Ճէրէճեան**

*Նիւ Ճըրզի նահանգի Խորհրդարանը Գերագոյն Դատարանի դատաւոր նշանակած է հանրածանօթ փաստաբան Էտուարտ Արսէն Ճէրէճեանը: Անոր թեկնածութիւնը անցեալ Դեկտեմբերին առաջարկուած էր կառավարիչ Ռիչըրտ Գոտիի կողմէ:*

*Էտուարտ Ա. Ճէրէճեան իր տիկնոջ Ռիթա Ճէրէճեանի հետ կը վարէ փաստաբանական գրասենեակ մը, որ երկու տասնամեակներու ընթացքին ստանձնած է բազմաթիւ աղմկոտ դատեր:*

Շար.ը էջ 4

## ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒԿԻ ԴԷՄ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԴԱԴՐԵՑՈՒԱԾ Է



**Օրհան Փամուկ**

*Կիրակի, Յունուար 22-ին Իսթանպուլի դատարանը որոշում կայացուցած է՝ կրճատել Թուրք աշխարհահռչակ գրող եւ հրապարակախօս Օրհան Փամուկի դէմ ամիսներ առաջ բացուած դատա-*

Շար.ը էջ 4

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԷԺԱՆ՝ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՁԵՌՆՏՈՒ

*Չի բացառւում, որ մենք սխալւում ենք Հայաստանին մատակարարուող բնական գազի գինը բարձրացնելու Ռուսաստանի մտադրութեան շարժառիթները գնահատելիս: Այն ձեւակերպումը, թէ Ռուսաստանը ստիպուած է նման յայտարարութիւններ անել՝ ցոյց տալու համար, որ Ուկրաինային եւ Վրաստանին մատակարարուող գազի թանկացման մէջ քաղաքական մոտիվ չկայ, այնքան էլ լուրջ չէ: Ի վերջոյ, զուտ տնտեսական առումով, ո՛չ Ուկրաինայում եւ ո՛չ էլ Վրաստանում ռուսական զօրքեր չկան, եւ բացի այդ, նշուած երկրները Ռուսաստանին հողեր չեն տուել անհատոյց վարձակալութեան, ինչը արել է Հայաստանը:*

*Եւ ուրեմն, Հայաստանում Ռուսաստանի զբաղեցրած հողերի վարձի բացակայութիւնը կարող էր դառնալ այն տնտեսական հիմնաւորումը, որը Ռուսաստանը կարող էր հնչեցնել այս առիթով: Եւ յետոյ, հիմա արդէն Ռուսաստանը չի էլ թաքցնում Ուկրաինայի եւ Վրաստանի նկատմամբ իր կիրառուած գազային շանտաժի քաղաքական բնոյթը, բայց Հայաստանի հետ շարունակում է բանակցել գազի գնի հարցում: Ընդ որում, առայժմ բանակցութեան նիւթ է միայն 2006 թուականին Հայաստանին անհրաժեշտ գազի գինը:*

*Հայկական կողմը երկարաժամկէտ հարցեր չի առաջադրում՝ այն հաշուարկով, որ 2006-07 թուականին Իրան-Հայաստան գազամուղը հնարաւոր է պատրաստ լինի, ասել է թէ՝ ռուսական գազի կարիքը Հայաստանը կարող է եւ չզգալ: Եւ այս իրավիճակում հարց է ծագում. գուցէ ռուսական կողմը Հայաստանին գազի բարձր գին է առաջարկում իրանական գազի գործօնը մեզ համար աւելի կարեւոր եւ մատչելի դարձնելու համա՞ր:*

*Ըստ էութեան, Իրանը մեզ պատրաստւում է գազը վաճառել 80-100 ԱՄՆ տոլարով: Բայց քանի որ իրանական գազի կալորիականութիւնը աւելի բարձր է, ստացւում է, որ այն անհամեմատ աւելի էժան է ռուսական գազից: Իհարկէ, դուք կ'ասէք, որ եթէ էժան է, նշանակում է շահաւէտ է: Իսկ գուցէ յիշենք, որ անվճար կամ էժան պանիրը միայն թակարդո՞ւմ է լինում: Մենք պատմել էինք ռուս-իրանական, այսպէս կոչուած, «Ռեվերս» ծրագրի մասին, եւ մեծ է հաւանականութիւնը, որ այս ողջ պատմութիւնը պէտք է դիտարկել հենց այս համատեքստում: Իսկ դա նշանակում է, որ Հայաստանին կարող է աւելի ձեռնտու լինել թանկ եւ ռուսական, քան թէ էժան եւ իրանական գազը: Նախ, այն պատճառով, որ իրանական գազը նոյնպէս կարող է թանկանալ, եւ դա կախուած է միայն Իրանի ղեկավարութեան քմահաճոյքից: Եւ յետոյ, Ռուսաստանը իրենից Հայաստանի գազային կախուածութիւնը շատ զգոյշ է օգտագործում, որովհետեւ, այնուամենայնիւ, Արեւմուտքի հետ յարաբերութիւնները շատ չլարելու խնդիր ունի:*

*Բոլորովին այլ է Իրանի պարագան, որը, ըստ էութեան, կարող է բացարձակապէս արհամարհել միջազգային հանրութեան կարծիքը: Եւ ուրեմն, Իրանը, Հայաստանին գազային կախուածութեան մէջ գցելով, կարող է Հայաստանին ԱՄՆ-ի եւ Արեւմուտքի հետ յարաբերութիւնների իր կերպը պարտադրել՝ փորձելով Հայաստանը դարձնել Արեւմուտքի դէմ պայքարի «շահիդ»: Եւ յետոյ, եթէ Ռուսաստանը թանկացնում է գազը, Հայաստանը կարող է այդ թանկացման տակից դուրս գալ Արեւմուտքից դրամական օգնութիւններ կամ վարկեր ստանալու ձեւով: Իսկ եթէ խօսքը իրանական գազի մասին է, Արեւմուտքը այդ երկրից գազ գնելու համար որեւէ մէկին ֆինանսական միջոցներ չի տրամադրի:*

***Հայաստանի մղումը դէպի իրանական գազի շուկայ կարող է ձեռնտու լինել Ռուսաստանին, գոնէ հակա-ամերիկեան տեսակէտից: Ռուսաստանը Հայաստանում ԱՄՆ-ի դէմ պայքարում ստիպուած է պահպանել բարեկրթութեան կանոնները, իսկ Իրանը նման բարդոյթ չունի***

*Ամէն դէպքում, Հայաստանի մղումը դէպի իրանական գազի շուկայ կարող է ձեռնտու լինել Ռուսաստանին, գոնէ հակաամերիկեան տեսակէտից: Ռուսաստանը Հայաստանում ԱՄՆ-ի դէմ պայքարում ստիպուած է պահպանել բարեկրթութեան կանոնները, իսկ Իրանը նման բարդոյթ չունի: Փոխարէնը ՌԴ-ն Իրանի վրայ բաւարար լծակներ ունի՝ գոնէ որպէս Իրանի միջուկային ծրագրի միակ աջակից: Եւ ուրեմն, այս իրավիճակում ՌԴ-ի հետ գազի հարցի շուրջ բանակցող ՀՀ իշխանութիւնները պէտք է յստակ երկու խնդիր փորձեն լուծել, եւ որքան էլ տարօրինակ հնչի, խնդիրը ոչ միայն գազի հնարաւոր ցածր գնի սահմանումն է, այլ Ռուսաստանից Հայաստանին գազի մատակարարման երկարաժամկէտ պայմանագրի ստորագրումը: Իսկ Իրան-Հայաստան գազամուղը պէտք է առայժմ ծառայեցնել բուն նպատակին. ՀՀ-ում դրանով էլ. էներգիա արտադրել եւ այն վաճառել Իրանին: Իսկ գազային հարցում առայժմ Իրանին պէտք է մի հարց առաջադրել. ինչո՞ւ է այդ երկիրը այդքան հեշտ համաձայնում Վրաստանին Ատրպէյճանի եւ ոչ թէ Հայաստանի տարածքով գազ մատակարարելու տարբերակին: Իսկ իրանական գազի վրայ Հայաստանը պէտք է յոյս դնի միայն մի դէպքում, երբ իր տարածքով Իրանից եկող մեծ գազամուղ անցնի դէպի Եւրոպա: Իսկ մինչ այդ իրանական գազի մասին՝ որպէս ռազմավարական մատակարարում, պէտք է մոռանալ եւ, օրինակ, Իրանին յստակ հասկացնել, որ եթէ Ատրպէյճանի տարածքով Վրաստանին գազ մատակարարի, ՀՀ-ն շատ չի դիմադրի ԼՂ հակամարտութեան գօտում ամերիկեան խաղաղապահ եւ ոչ միայն խաղաղարար ուժերի տեղադրմանը:*

*Ինչ վերաբերում է Ռուսաստանին, պէտք է խօսել նրանց զօրքերի զբաղեցրած հողերի վարձակալութեան մասին եւ մէկ քառակուսի մետրը հաշուել Հիւսիսային պողոտային «էլիտար» տների քառակուսի մետրի գներով:*

***ԽՄԲԱԳՐԱԿԱՆ***
***«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»***
*1-21-06*

# «ՆՈՐ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ» ԼԵԳԵՆԴԸ

*Հայաստանում այսօր ամենաքննարկուող թեման ներքաղաքական վերախմբաւորումներն են: Խօսքն առաջին հերթին նոր ստեղծուող քաղաքական ուժերի եւ դրանց՝ յաջորդ խորհրդարանում իբր երաշխաւորուած դերակատարութեան մասին է: Աւելի կոնկրետ՝ խօսքն այն մասին է, որ Քոչարեանն այլեւս չի վստահում այսօրուայ կոալիցիային եւ ցանկանում է 2007 թուականին ձեւաւորուելիք խորհրդարանը տեսնել միանգամայն այլ կազմով եւ իր համար ստեղծել նոր յենարան: Ըստ շրջանառուող սցենարների, Քոչարեանը դա անում է, որպէսզի 2008-ից յետոյ էլ ինչ-որ կերպ պահպանի իշխանութիւնը:*

*Սկսենք նրանից, որ Քոչարեանի համար սա քաղցր ինքնախաբէութիւն է: Քոչարեանը քաղաքական հոգեվարքի մէջ է եւ շատ լաւ հասկանում է դա: Մի կողմից՝ նա գիտի, որ 2008-ին չի կարող երրորդ անգամ առաջադրուել նախագահի պաշտօնում (ոչ թէ որովհետեւ ՀՀ Սահմանադրութիւնն է արգելում դա, այլ որովհետեւ ոչ մէկը թոյլ չի տա՝ ոչ արտաքին աշխարհը, ոչ Հայաստանի քաղաքական ուժերը): Միւս կողմից՝ նա գիտի, որ եթէ նախագահ չլինի, չի կարող պահպանել իշխանութիւնը: Այսինքն՝ նա չի կարող լինել, ասենք, վարչապետ, Ազգային ժողովում ունենալ մեծամասնութիւն եւ փաստացի ղեկավարել երկիրը՝ տիկնիկի պէս ղեկավարելով նախագահին: Ինչո՞ւ: Որովհետեւ հագիւ թէ 2008-ին նախագահական ընտրութիւններում յաղթի որեւէ «անգլիական թագուհի»: Հայաստանում դա անհնար է: Քոչարեանը սեփական փորձով գիտի, որ Հայաստանում ոչ մէկը երկար ժամանակ չի հանդուրժի «անգլիական թագուհու» կարգավիճակը, եւ վաղ թէ ուշ մի խումբ ռոմանտիկներ կը ներխուժեն կամ խորհրդարան, կամ նախագահական: Պարզ ասած, Քոչարեանը գիտի, որ իրադարձութիւնների զարգացման ցանկացած սցենարի դէպքում ինքը 2008-ին կորցնելու է իշխանութիւնը: Եւ կորցնելու է անվերադարձ:*

*Աւելին՝ Քոչարեանն արդէն սկսել է կորցնել իշխանութիւնը: Նրա իշխանութիւնը բառացիօրէն ամէն օր թուլանում է, եւ սա միանգամայն բնական է: Որքան մօտենայ 2008-ը, այնքան այդ իշխանութիւնը թուլանալու է: Այդպէս եղել է միշտ եւ բոլոր երկրներում: Հենց սա է պատճառը, որ 2007 թ. խորհրդարանական ընտրութիւնների «քարոզարշաւը» զարմանալիօրէն շուտ սկսուեց: Մինչեւ այդ ընտրութիւնները դեռեւս մէկ տարուց աւելի ժամանակ կայ, բայց այնպիսի տպաւորութիւն է, թէ ընտրութիւններին մէկ-երկու ամիս է մնացել: Ակնյայտ է, որ այդ «փալստարտը» ձեռնտու էր առաջին հերթին Քոչարեանին: Նրան պէտք է «ապագայում իրեն սատարող» նոր ուժերին ակտիվացնել հիմա՝ քանի դեռ իր «դաբրոն» որեւէ արժէք ունի: 2006-ի վերջին կամ 2007-ին Քոչարեանի «դաբրոն» այլեւս որեւէ արժէք չի ունենալու:*

*Այդ դէպքում ինչո՞ւ Քոչարեանը հենց հիմա չի լուծարում խորհրդարանը եւ նոր ընտրութիւններ չի նշանակում: Շատ պարզ պատճառով: Որովհետեւ նոր ընտրութիւնների արդիւնքում ձեւաւորուած խորհրդարանը մօտաւորապէս նոյն տեսքը կ'ունենայ՝ այն տարբերութեամբ, որ ընդդիմութիւնն աւելի քիչ ձայներ կ'ունենայ, հանրապետականները՝ աւելի շատ:*

*Քոչարեանին այսօր լեգենդ է պէտք: Լեգենդ, թէ իբր 2007-ին ձեւաւորուելու է այնպիսի խորհրդարան, որն ամբողջովին ենթարկուելու է իրեն: Քոչարեանը յոյս ունի տարբեր լրատուամիջոցներով այնքան թմբկահարել այս լեգենդը, մինչեւ մարդիկ սկսեն այն ընկալել որպէս բացարձակ ճշմարտութիւն: Այսինքն, ժողովրդական լեզուով ասած, Քոչարեանը սկսել է «փրփուրներից կառչել»: Թող կառչի: Եթէ ինքն իր տարածած հեքիաթներին հաւատում է, դա իր պրոբլեմն է: Կարեւորը՝ ժողովուրդը չհաւատայ:*

*Իսկ իրականութիւնը հետեւեալն է: Ինչ խորհրդարան էլ ձեւաւորուի 2007-ին, միեւնոյն է՝ 2008-ին Քոչարեանն այլեւս նախագահ չի լինելու: Աւելին՝ նա չի ունենալու (առ այսօր չունի) ոչ սեփական կուսակցութիւն, ոչ գաղափարակիցների թիմ, ոչ օրինական բիզնես, ոչ միջազգային հեղինակութիւն:*

*Հետաքրքիր է, որպէս ի՞նչ պիտի նոր ձեւաւորուած քաղաքական դաշտը «մտնի Քոչարեանի տակ»՝ ունենալով նախագահ, վարչապետ եւ ԱԺ նախագահ: Դա հաւանական է թւում միայն հիմա, երբ Քոչարեանը դեռեւս ռէալ իշխանութիւն ունի: 2008-ին այս հարցն ընդհանրապէս լրջօրէն չի քննարկուելու:*

*Եւ Քոչարեանն արդէն հասկացել է սա:*

***ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ***
***«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»***
*1-21-06*

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

ԼՈՒՐԵՐ

## ՀԱՆՐԱՔՈՒԷԻ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՂԱՂԱԿԵԼ Է ՊԵՏՔ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Հելսինկեան ընկերակցութեան նախագահ Միքայէլ Դանիէլեանը մեզ յայտնեց, որ նախորդ տարեվերջին իր պատրաստած նամակը՝ Հայաստանում հանրաքուէի խայտառակութիւնների վերաբերեալ, մտադիր է ամէն գնով եւրոպական կառոյցների քննարկման նիւթ դարձնել: Մասնաւորապէս, նա հանդիպել է ԵԽԽՎ լիագումար նիստին մասնակցող «Արդարութիւն» դաշինքի ղեկավար Ստեփան Դեմիրճեանին, նրան խնդրել՝ ելոյթում անդրադառնալ Հելսինկեան ընկերակցութեան փաստաթղթում արծարծուած խախտումներին՝ Հայաստանի պարտաւորութիւնների կատարման մասով:*

*Իրաւապաշտպան Դանիէլեանը մեզ ասաց, որ Դեմիրճեանը չի խոստացել իր նամակի մասին բարձրաձայնել զուտ ժամանակի սղութեան պատճառով՝ «երկու րոպէ ելոյթի ժամանակ ունեմ» պատճառաբանութեամբ: Միկա Դանիէլեանը, սակայն, մտադիր է տարբեր ճանապարհներով փաստաթուղթը ԵԽ պատգամաւորներին հասցնել: Մասնաւորապէս, նա տարբեր երկրների Հելսինկեան ընկերակցութիւնների իր գործընկերների միջոցով կը տարածի նամակը, ինչպէս նաեւ շատ օրինակներով կը տեղադրի դահլիճի մուտքի առջեւի սեղանին:*



Հայաստանի Հելսինկեան ընկերակցութեան նախագահ Միքայէլ Դանիէլեան

*Նա վստահ է, որ կը գտնուեն պատգամաւորներ, որոնց կը հետաքրքրի Հայաստանի մասին պատմող ինֆորմացիան:*

## ՍՏԵՓԱՆ ԴԵՄԻՐՃԵԱՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ ՉՏԱԼ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»:«Ես չէի ուզենայ, որ Հայաստանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառուեն, բայց չեմ կարող իմ գնահատականները չտալ»,- ասում է «Արդարութիւն» խմբակցութեան ղեկավար, ԵԽԽՎ-ում հայաստանեան պատուիրակութեան անդամ Ստեփան Դեմիրճեանը, որը այսուհետ փոխարինում է Շաւարշ Քոչարեանին:*

*Ըստ Ստեփան Դեմիրճեանի՝ ինքը պատրաստւում է իր կարճ ելոյթում բացատրութիւն տալ, թէ ինչու ընդդիմութիւնը բոյկոտեց հանրաքուէն եւ ետ կանչեց իր ներկայացուցիչներին ընտրական յանձնաժողովներից: Յիշեցնենք, որ այս զեկոյցում ափսոսանք է յայտնուած ընդդիմութեան բոյկոտի առթիւ:*

*«Բոյկոտեցինք, որովհետեւ չկատարուեցին մեր պահանջները՝ վստահութեան մթնոլորտի ձեւաւորմանն ուղղուած: Բոյկոտեցինք, որովհետեւ մինչեւ քուէարկութիւնը խախտուեց «Հանրաքուէի մասին» օրէնքը, եւ հաւասար պայմաններ այդպէս էլ չստեղծուեցին»,- ասում է պարոն Դեմիրճեանը: Իսկ վստահութեան մթնոլորտի ձեւաւորման համար, ըստ նրա, նախ եւ առաջ պէտք է պատժուէին 2003թ ընտրակեղծիքների հեղինակներն ու կատարողները:*

*Ի դէպ, պարոն Դեմիրճեանը կարծում է, որ սահմանադրական հանրաքուէի արդիւնքները կանխատեսելի էին, «միգուցե անկանխատեսելի էր խախտումների այսպիսի ծաւալը»: Սա, ըստ նրա, անկանխատեսելի էր նոյնիսկ իշխանութեան համար:*

## ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ Կ'ԱՅՑԵԼԵՆ ՓԵՏՐՈՒԱՐԻՆ

*ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Եուրի Մերզլեակովը յայտնել է, որ համանախագահները փետրուարի սկզբին կարճատեւ այցով ժամանելու են տարածաշրջան:*



*«Այցը շատ կարճատեւ կը լինի՝ միայն նախագահներին հանդիպելու նպատակով», - «Թրենդ»-ի բացառիկ հարցազրոյցում նշել է Մերզլեակովը՝ աւելացնելով, որ այցի նպատակը փետրուարին նախատեսուած Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների հերթական բանակցութիւնները նախապատրաստելն է:*

*Ռուսաստանցի դիւանագէտը հրաժարուել է նշել այցի կոնկրետ ժամկէտը, քանի որ, ըստ նրա՝ «ժամկէտի հաստատումը հակամարտութեան կողմերից դեռեւս չի ստացուել»: Եուրի Մերզլեակովը իրատեսական չի համարում փետրուարեան հանդիպման ժամանակ որեւէ փաստաթղթի ստորագրում. - «Կարծում եմ, այդ մասին խօսելը դեռ վաղ է: Նախ, պէտք է համաձայնութեան գալ հարցերի, հակամարտութեան սկզբունքների շուրջ», - նշել է ռուսաստանցի համանախագահը:*

## ՕՍԿԱՆԵԱՆԻ -ՄԱՄԵԴԵԱՐՈՎԻ ԼՈՆՏՈՆԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԱՅԱՑԱՒ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Քոչարեան-Ալիեւ հանդիպման պայմանաւորուածութիւնը ձեռք բերուեց: Աւարտուեցին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցով Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերի նախարարներ Վարդան Օսկանեանի եւ Էլմար Մամեդեարովի միջեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մասնակցութեամբ:*

*Բանակցութիւնների արդիւնքում կողմերը պայմանաւորուածութիւն են ձեռք բերել երկու երկրների նախագահների հանդիպման մասին: Թէ հանդիպումը երբ կը կայանայ, առայժմ Վարդան Օսկանեանը դժուարանում է ասել, սակայն առաջիկայ Քոչարեան-Ալիեւ հանդիպումն անխուսափելի է:*

## ԼՂՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԴԷՄ Է ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: ԼՂՀ տարածքում խաղաղապահների տեղակայման առաջարկին միանշանակօրէն դէմ են Ղարաբաղի խորհրդարանի բոլոր քաղաքական ուժերը: «Ժողովրդի անվտանգութեան եւ Ղարաբաղի տարածքային ամբողջականութեան լաւագոյն երաշխիքը՝ Ղարաբաղի բանակն է»,- ԼՂ հանրային հեռուստաընկերութեան եթերում յայտարարել է Դեմոկրատական կուսակցութեան խմբակցութեան ղեկավար Վահրամ Աթանէսեանը:*

*«Karabakh-Online»-ի ներկայացմամբ՝ պարոն Աթանէսեանն այն կարծիքին է, որ տարածաշրջանում օտարերկրեայ խաղաղապահների ներկայութիւնը կողմերից մեկին կը ստիպի դիմել անցանկալի քայլերի, բացի այդ, պատգամաւորը համոզուած է, որ խաղաղապահների գործունէութիւնը չի կարող դրական ազդեցութիւն ունենալ այն պատճառով, որ միջազգային հանրութիւնն ուժեղացրել է հետաքրքրութիւնը Ղարաբաղի հարեւան Իրանի վրայ: Ուժերի հաւասարակշռութեան փոփոխութիւնը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետեւանքների, համոզուած է պարոն Աթանէսեանը:*

*Խորհրդարանական երկրորդ մեծ խմբակցութեան ղեկավար Արթուր Թովմասեանի կարծիքով՝ խաղաղապահների մուտքը Ղարաբաղ պայմանաւորուած է նաւթային գործօնով: Գերտէրութիւններին անհրաժեշտ է ապահովել նաւթատարների անդադար աշխատանքը, դրա համար էլ նրանց համար անհրաժեշտ է կայունութիւնը տարածաշրջանում: Սակայն, այդ ամէնը չպէտք է իրականացուի Ղարաբաղի շահերի հաշուին, կարծում է պատգամաւորը:*

## ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ԴԷՄ Է ՍՓԻՒՌՔԱՀԱՅԵՐԻ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԻՆ

*ՎԻԵՆՆԱ, 24 ՅՈՒՆՈՒԱՐ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: «Մեր յարաբերութիւնները Ռուսաստանի հետ շատ բարեկամական են, սակայն մենք գործընկերներ ենք եւ պէտք է հաւասարազօր լինենք: Յամենայնդէպս այդպէս են կարծում Հայաստանի նոր սերնդի քաղաքական գործիչները»,- յայտարարել է ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարեանը աւստրիական «Շտանդարտ» թերթին տուած հարցազրոյցում:*

*Ինչ վերաբերում է Հայաստանի անմիջական հարեւաններին, ապա ԱԺ նախագահն ընդգծել է, որ Թուրքիան դեռ չի ցանկանում ճանաչել ցեղասպանութիւնը եւ Հայաստանին պահում է շրջափակման մէջ: «Թուրքիան Հայաստանի հետ համարձակ, իսկ Հայաստանը Թուրքիայի հետ բաց եւ անկեղծ երկխօսութեան կարիք ունի: Նոյնը վերաբերում է Ատրպէյճանին՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման կապակցութեամբ: Խնդիրը պէտք է լուծուի երկկողմանի փոխզիջումների ճանապարհով: Սա նաեւ մեր տարածաշրջանի հետագայ ժողովրդավարացման խնդիր է: Ինչքան բարձր լինի իշխանութեան լեգիտիմութեան աստիճանը, այնքան աւելի հեշտ է բացատրել ժողովրդին փոխզիջումների կարեւորութիւնը»,- նշել է նա:*

*Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի կապակցութեամբ Ղարաբաղում հանրաքուէին ատրպէյճանցի փախստականների մասնակցութեան հնարաւորութեանը վերաբերող հարցին ԱԺ նախագահը պատասխանել է, որ «ելնելով ներկայացուած փաթեթի բովանդակութիւնից՝ դա կարող է իր համար ընդունելի լինել, սակայն երկրում շատերի համար՝ ոչ»:*

*Արթուր Բաղդասարեանն իր հարցազրոյցում նաեւ նշել է, որ արտասահմանի հայերը Հայաստանում ընտրութեան իրաւունք չունեն, եւ դեռ պէտք է օրէնք ընդունուի, որը կը սահմանի նրանց իրաւունքներն ու պարտականութիւնները: Նա յայտնել է, որ ինքը եւ իր ղեկավարած «Օրինաց երկիր» կուսակցութիւնը դէմ են նրանց ընտրելու իրաւունքին. «Մենք չենք կարող ընդունել, որ որեւէ մէկը, ապրելով, ասենք, Կալիֆոռնիայում, ընտրի Հայաստանում»: Նրա համոզմամբ, ընտրելու իրաւունքը պէտք չէ կապել դումարի հետ: Ակնարկելով սփիւռքահայ ներդրողներին՝ ԱԺ նախագահը յայտարարել է. «Իսկ նա, ով ներդրում չի կատարում, ընտրելու իրաւունք չպէ՞տք է ունենայ: Հայաստանը որբի գլուխ չէ, եւ բոլորն իրենց վարսաւիր չպէտք է համարեն»:*

*Հայաստանի յաջորդ նախագահ դառնալու դէպքում Արթուր Բաղդասարեանը կը պայքարէր կոռուպցիայի դէմ եւ երկրի դիրքերը կ՚ամրապնդէր եւրոպական ընտանիքում: Պատասխանելով լրագրողի հարցին՝ նա նշել է. «Հայաստանը պէտք է լինի բաց, ազատ երկիր, որտեղ կը գործի օրէնքի իշխանութիւնը եւ ոչ իշխանութեան օրէնքը, որովհետեւ այն իշխանութիւնը, որը վախենում է իր ժողովրդից, ցանկանում է ժողովրդին հսկողութեան տակ պահել»: «Լոյս սփռելու երկու ձեւ կայ. կարելի է լոյս վառել կամ դառնալ այդ լոյսն արտացոլող հայելի»,- ամփոփել է ԱԺ նախագահը:*

## ԼՈՒՐԵՐ

# ԻՎԱՆՈՎ. «ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԶԷՆՔ ԿԸ ՎԱՃԱՌԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒ ԱՏՐՊԷՅՃԱՆԻՆ»



Ռուսաստանի պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ռուսաստանի պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանովը, որն Երկուշաբթի, Յունուար 23-ին ժամանել է Պաքու, յայտնել է, որ Ռուսաստանը զէնք կը վաճառի Հայաստանին եւ Ատրպէյճանին:

«Ինչ վերաբերում է զէնքին եւ ռազմական տեխնիկային, ապա մենք պատրաստ ենք գինել թէ՛ Հայաստանին, թէ՛ Ատրպէյճանին՝ հաշուի առնելով ուժերի հաւասարակշռութիւնը եւ մեր սեփական ազգային անվտանգութեան շահերը», - «Ինտերֆաքս» գործակալութեան հաղորդմամբ, ասել է Իվանովը լրագրողներին՝ աւելացնելով. - «Ռուսաստանը, բնականաբար, դա կ'անի կոմերցիոն հիմքի վրայ»:

Իվանովը չի մանրամասնել, թէ կոնկրետ ինչ տեսակի եւ քանակութեամբ զէնք է պատրաստւում վաճառել երկու երկրներին:

# ՀԱՅԱՍՏԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԱՐՀԱՄԱՐՀՈՂ ԵՐԿԻՐ

Շարունակուած էջ 1-էն

կիրառուող կոտտանքներն ու նուաստացումները տարածուած երեւոյթ են Հայաստանի մէջ. - «Կոտտանքները սովորաբար տեղի կ'ունենան նախադատավարական կալանքի ժամանակ՝ վկայութիւն կամ խոստովանութիւն կորզելու նպատակով»:

Ըստ Human Rights Watch-ի, չարաշահումները կը շարունակուին նաեւ բանակէն ներս, ուր «ամէն տարի մահացութեան տասնեակ կասկածելի դէպքեր տեղի կ'ունենան»:

«Թէեւ հայկական լրատուական դաշտը անկախ ու ընդդիմադիր տպագիր մամուլ ունի, սակայն «Ա1+»-ը, «Նոյեան Տապան»-ը եւ ռուսաստանեան «էն-Տե-Վե»-ն չեն կրնար հեռարձակուիլ, քանի որ կառավարութիւնը զրկած է անոնց արտօնագիրէ», - ըսուած է զեկոյցին մէջ:

«2005 Թուականի Մայիսին կառավարութիւնը դիմեց Սահմանադրական դատարան եւ սահմանափակեց Օմպուդսմէնի (մարդու իրաւունքներու պաշտպան) լիազօրութիւնները դատարաններէն փաստաթուղթեր ստանալու եւ անոնց ծանօթանալու առումով: Սահմանադրական դատարանը այս որոշումը ընդունեց, երբ հրապարակուեցաւ օմպուդսմէնի առաջին տարեկան զեկոյցը, որտեղ կառավարութիւնը քննադատութեան ենթարկուեցաւ մարդու իրաւունքներու ասպարէզէն ներս», - ըսուած է զեկոյցին մէջ:

# ԷՏՈՒԱՐՏ ԱՐՍԷՆ ՃԵՐԷՃԵԱՆ ՆԻՒ ՃԸՐԶԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՒՈՐ

Շարունակուած էջ 1-էն

Էտուարտ Ա. Ճէրէճեան եղած է նաեւ քաղաքային դատախազ, հանդէս եկած է դասախօսութիւններով եւ ելոյթ ունեցած է հեռատեսիլի յայտագիրներու վրայ:

Էտուարտ Ա. Ճէրէճեան մասնակցութիւն կը բերէ նաեւ հայկական համայնքային կեանքին: Անցեալ տարի ան մաս կը կազմէր Հայկական Ցեղասպանութեան ոգեկոչման 90-ամեակի յանձնախումբին՝ Նիւ Եորքի շրջանին մէջ: Ան նաեւ կը ղեկավարէ Արմէն եւ Փերսաբէ Ճէրէճեան հիմնադրամը, որ օժանդակութիւններ կը բաշխէ Միացեալ Նահանգներու եւ աշխարհի տարբեր երկիրներու մէջ գործող կրթական եւ հրատարակչական հաստատութիւններուն:

Էտուարտ Ճէրէճեան զաւակն է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան երկարամեայ ղեկավարներէն եւ «Երիտասարդ Հայաստան» պաշտօնաթերթի խմբագիր ողբացեալ ընկ. Արսէն Ճէրէճեանի:

# ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒԿԻ ԴԷՄ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԴԱԴՐԵՑՈՒԱԾ Է

Շարունակուած էջ 1-էն

կան գործը: Փամուկ կը մեղադրուէր «Թուրքերու ազգային ինքնութիւնը վիրաւորելու» մէջ:

Անցեալ տարուայ Փետրուարին զուիցերիական թերթի մը տրուած հարցազրոյց ընթացքին Փամուկ յայտարարած էր, որ «Թուրքիոյ մէջ մէկ միլիոն հայեր, 30 հազար քուրտեր սպաննուած են, եւ իրմէ բացի ոչ ոք չի յանդգնիր խօսիլ այդ մասին»:

Ըստ CNN-Turk հեռատեսիլին, դատարանին ուղղուած նամակի մը մէջ արդարադատութեան նախարարութիւնը ըսած է, որ իրաւասու չէ գործը շարունակելու մասին որոշում կայացնել, եւ հետեւաբար դատարանը որոշուած է դադրեցնել գործը:

«Ֆրանսփրես» լրատու գործակալութեան համաձայն, նախարարութեան ներկայացուցիչը հրաժարած է մեկնաբանել դատարանի որոշումը՝ ըսելով, թէ նախարարութիւնը յայտարարութեամբ հանդէս կու գայ յաջորդ օրը:

Անցեալ դեկտեմբերին Օրհան Փամուկի դատավարութիւնը յետաձգուած էր մինչեւ 2006 Թուականի Փետրուարի 7-ը: Այս ընթացքին Թուրքիոյ արդարադատութեան նախարարութիւնը պիտի որոշէր, թէ որ օրէնսգրքով պիտի դատապարտուի Փամուկը՝ հին, թէ՝ նոր:

Օրհան Փամուկի դատավարութիւնը մեծ հետաքրքրութիւն յառաջացուց եւրոպական կառոյցներու մօտ, որոնց համար այս դատավարութիւնը նկատուեցաւ քննութիւն՝ Եւրոպա մուտք գործելու պատրաստուող Թուրքիոյ մէջ խօսքի ազատութեան առումով:

# ՊԱՅԹԵՑՈՒԵԼ Է ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ՍՆՈՂ ՄՈԶԴՈԿ-ԹԲԻԼԻՍԻ ԳԱԶԱՏԱՐԸ



«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հարաւային Կովկասը զրկուած է ռուսական գազից: Կիրակի, Յունուար 22-ի վաղ առաւօտեան Հիւսիսային Օսիայի Վերին Լարս սահմանային անցակէտի մօտակայքում մէկը միւսին յաջորդած երկու պայթիւնները շարքից դուրս բերեցին Հարաւային Կովկասը սնող Մոզդոկ-Թբիլիսի գազատարն ու տարածաշրջանը կանգնեցրին էներգետիկ ճգնաժամի առջեւ:

Պաշտօնական Թբիլիսին յայտարարեց, որ երկրում առկայ գազի պաշարները կը բաւականացնեն ընդամէնը մէկ օր եւ օգնութեան խնդրանքով դիմեց Ատրպէյճանին, Իրանին, Թուրքիային եւ նոյնիսկ հեռաւոր Միացեալ Նահանգներին ու Եւրոպային:

«Սա Ռուսաստանի կողմից վանդալիզմի աննախադէպ դրսեւորում է, թաքնուած դիւերսիա: Ռուսները մեզ մէկ անգամ չեն սպառնացել թողնել առանց գազի ու լոյսի, եւ ահա դա տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ Վրաստանն ապրում է ամենացուրտ ձմեռներից մէկը», - ըստ «Ֆորբս» հանդէսի, յայտարարել է Վրաստանի նախագահ Միխեիլ Սահակաշվիլին:

Ռուսաստանի արձագանքն այս մեղադրանքներին չուշացաւ. արտգործնախարարութիւնը տարածեց հաղորդագրութիւն, որտեղ վրացական կողմի դիրքորոշումը որակեց որպէս «հիստերիկ եւ ցինիկ»:

«Եթէ Թբիլիսիում անշեղօրէն որոշել են փչացնել յարաբերութիւնները Ռուսաստանի հետ, ապա, թերեւս, հաշուարկել են նաեւ նման քաղաքականութեան բոլոր հնարաւոր հետեւանքները», - ասւում է յայտարարութեան մէջ, - «Վրացիների վարքագիծն աւելի քան տարօրինակ է այն դէպքում, երբ այս պահին արւում է հնարաւորը՝ գազատարը վերականգնելու եւ վթարի ազդեցութիւնը նուազագոյնի հասցնելու համար»:

Կէսօրից «Գազպրոմ»-ը աւելացրեց գազամատակարարումը Ատրպէյճանին, որպէսզի գոնէ այդ ճանապարհով Վրաստանը կարողանայ դուրս գալ էներգետիկ շրջափակումից: Ըստ երկու երկրների միջեւ նախկինում կնքուած համաձայնագրի, այսօրուանից Ատրպէյճանը կը սկսի Վրաստանին օրական 2 միլիոն խորանարդ մետր գազ մատակարարել:

«Հայռուսգազարդ» ընկերութեան մամուլի պատասխանատու Շուշան Սարդարեանը «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց, որ Հայաստանը որեւէ երկրի հետ նման համաձայնագիր չունի, եւ այժմ օգտագործում է Աբովեանի գազապահեստարանում առկայ միջոցները: Թե դեռ քանի օր դրանք կը բաւականացնեն, ընկերութիւնը առայժմ յստակ չի նշում. - «Ամէն ինչ կախուած է նրանից, թէ առաջիկայ օրերին բնակչութիւնը որքան գազ կ'օգտագործի», - նշեց «Հայռուսգազարդ»-ի ներկայացուցիչը եւ յորդորեց սպառողներին՝ առաջիկայ օրերին խնայողաբար օգտագործել կապոյտ վառելիքը:

Ըստ «Ռեգնում» գործակալութեան, «Գազպրոմ»-ը խոստացել է Մոզդոկ-Թբիլիսի գազատարի վերականգնման աշխատանքներն աւարտել Յունուարի 25-ին:

# ԳԱԶԻ ՍԱԿԱԳՆԻ ՇՈՒՐՋ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ ԵՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց Հայաստանի նախագահի խօսնակ Վիկտոր Սողոմոնեանը, գազի սակագնի վերաբերեալ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ բանակցութիւնները շարունակւում են, եւ դրանց վերջնական արդիւնքները յայտնի կը դառնան մինչեւ Փետրուարի կէսը:

Սողոմոնեանը նաեւ հերքեց ռուսաստանեան «Կոմերսանտ» թերթի տարածած լուրը, թէ «Ռոբերդ Քոչարեանը ընդունել է վերջնագիրը եւ պատրաստ է Ռուսաստանին յանձնել կառուցուող Իրան - Հայաստան գազատարի 45 տոկոսը»:

Յունուար 23-ին Ռոբերդ Քոչարեանը վերադարձել է Մոսկուայից, որտեղ հանդիպել է Վլադիմիր Պուտինի հետ:

«Գազպրոմ» ռուսաստանեան ընկերութիւնը յայտարարել էր, որ մտադիր է աւելացնել Հայաստանին մատակարարուող գազի սակագինը 56-ից մինչեւ 110 դոլար: Վիկտոր Սողոմոնեանի հաւաստմամբ, «պայմանաւորուածութիւնը, որ Ռուսաստանը չի աւելացնի գազի սակագինը մինչեւ ապրիլի 1-ը, մնում է ուժի մէջ»:

**ԱԶԳԱՅԻՆ**

# ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՏԻԳՐԱՆ ՈՒՐԻԽԱՆԵԱՆԻ ՀԱՐՑԵՐԻՆ

Ծ.Խ. Ինչպէս հաղորդած էինք «Մասիս»ի Դեկտեմբեր 17, 2005 համարով, Հայաստանի Հանրապետութեան առաջին Արտգործ նախարար Րաֆֆի Յովհաննէսեան հանրային հաշուետուութեան հրաւիրելով Ռ. Քոչարեանի՝ անոր ներկայացուց 21 հարցումներ: Քոչարեան մերժեց պատասխանել ներկայացուած հարցումներուն:

«Հայոց Աշխարհ» իր 8 Դեկտեմբեր 23-ի համարով, իշխանամէտ օրաթերթը Քոչարեանին ուղարկուած գնդակը կը վերադարձնէ Ր. Յովհաննէսեանին, անոր ուղղելով 21 հարցում, որոնց շուտով կը պատասխանէ Ր. Յովհաննէսեան:

Նկատել՝ երկու պատասխանատուներու տարբերութիւնը:



**1. Երեւանը համարո՞ւմ եք Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաք:**

*Կռահեցիք. մեր իրական կամ Ձեր ասած՝ «իսկական» Հայաստանի մայրաքաղաքը Երեւանն է: Իսկ Ձեր՝ «մօտաւոր աշխարհի վրայ, աշխարհքի երեսին» եղած 210 երկրների կողմից ճանաչուող (առանց հեգնելու բառացիօրէն մէջբերում ենք Դեկտեմբերի 23-ին «Հ2» հեռուստաընկերութեանը տուած Ձեր բացառիկ հարցազրոյցի ձեւակերպումները՝ արտասանութեանը համապատասխան) եւ «Հայոց աշխարհի» հեղինակային բառարանի եզրաբանութեամբ՝ խմբապետի, իսկ մեր որակմամբ՝ Նախագահի պաշտօնակատար Ռ. Քոչարեանի դարձած «կոմպլեմենտար» ու վիրտուալ Հայաստանի մայրաքաղաքը մի օր/ժամը՝ Մոսկուան է, մի օր/ժամը՝ Բրիւսէլը, միւս օր/ժամը՝ Ուաշինգտոնը, վաղը, չենք բացառում, մի գուցէ եւ՝ Փեքինը, յանձինս նշուած տէրութիւնների իսկական կամ փափաքուող «պոլիտբիւրոների»:*

**2. Ցանկանո՞ւմ էք արդեօք տեսնել Լեռնային Ղարաբաղը Ատրպէճանի կազմում:**

*Եթէ յիշում էք (այն ժամանակ Դուք հաւանաբար դեռահաս էիք), տակաւին լինելով ԱՄՆ քաղաքացի, Րաֆֆի Յովհաննիսեանը գործուն մասնակցութիւն է ունեցել Լեռնային Ղարաբաղն Ատրպէճանի կազմից դուրս բերելու պայքարում: Դա կը հաստատի Ձեր կողմից վահանուող ղեկավարութիւնը, եթէ ազնուութեան փշրանքներ նրա մէջ դեռ մնացել են: Ինչ վերաբերում է գաղափարական մասին, ապա խորհուրդ կը տանք կարդալ ԼՂ հարցի լուծման ուղիների շուրջ Րաֆֆի Յովհաննիսեանի՝ հանրութեանը ներկայացրած ծրագիրը: Ի դէպ, այն շարադրուած է շատ յստակ, որպէսզի հասկանալի լինի բոլորին անխտիր՝ տառաճանաչից, բնատուր կամ ձեռքբերովի սակաւամիտից մինչեւ խելօքների խելօքը:*

**3. ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանի հրամանագրերով երբեւէ բարձր պաշտօնների նշանակուե՞լ էք:**

*Իրօք, Րաֆֆի Յովհաննիսեանը ստանձնել է Նախագահի պաշտօնակատար Ռոբերտ Քոչարեանի առաջարկած եւ մեր երկրի օրէնսդրութեամբ ամրագրուած հանրակարգերի ղեկավար պաշտօններ: Նա ստորագրեց պարոն Յովհաննիսեանի նշանակման մասին հրամանագրերը, սակայն յետագայում դրա համար խիստ ափսոսաց, քանի որ վերջինս հրաժարուեց խաղալ նրա կանոններով: Այսօր արդէն այդ կանոններով խաղում է ողջ պետական համակարգը:*

**4. Երբ դիմում էիք ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանին՝ քաղաքացիութիւն ստանալու խնդրանքով, արդեօք նամակը սկսո՞ւմ էիք «Յարգելի պարոն պաշտօնակատար» բառերով:**

*Նման դիմելաձեւը պայմանաւորուած էր թէ՛ Յովհաննիսեանի կողմից սահմանադրօրէն ամրագրուած ինստիտուտի նկատմամբ յարատեւ յարգանքով, թէ՛ պաշտօնակատարին կեղծիքով նախագահ դարձրած արտաքին ու ներքին խմբակների՝ «ընտրութիւնների» արդիւնքները հապճեպ «ճանաչելու» փաստերի դառն ըմբռնումով: Նաեւ այն յոյսի փայփայմամբ, որ Ռ. Քոչարեանն՝ ընտրուած չլինելով հանդերձ, յետագայում գուցէ առնուազն մերժուած ու արհամարհուած չի մնայ հանրութեան մեծամասնութեան կողմից: Ասենք՝ նման դիմելաձեւի կարող էք շատ հանդիպել Ձեր յաճախ այցելած աշխատասենեակներում պահուող դիմումագրերում: Տուեալ դէպքում մի գուցէ Րաֆֆի Յովհաննիսեանը չարդարացուած ռոմանտիկ (ոչ իշխանական կամ հունանեանական իմաստով) է եղել՝ ընդունում ենք: Սակայն ընտրութիւնների արդիւնքները ճանաչելու կամ չճանաչելու նրա եւ այլոց իրաւունքը յենւում է զուտ սահմանադրական չափանիշների վրայ:*

**5. Զբաղուե՞լ էք արդեօք թմրաբիզնեսով եւ օգտագործո՞ւմ էք թմրանիւթեր:**

*Րաֆֆի Յովհաննիսեանի «թմրանիւթը» Հայրենիքն է, իսկ «բիզնեսը» եղել եւ մնում է իր ուժերի չափով հայրենանպաստ գործունէութիւն ծաւալելը, եւ յատկապէս՝ Արցախն ու ազատագրուած տարածքները միջազգային տարբեր ատեաններում ատրպէյճանական ու միջազգային այն մեղադրանքներից պաշտպանելը, թէ Հայաստանի (ԱՄՆ պէտքարտուղարի նախկին տեղակալ Էլիզաբէթ Ջոնսի յայտարարութեամբ՝ ԼՂՀ նախկին) պարագլուխներն այնտեղ զբաղուած են թմրանիւթերի արտադրութեամբ, արտահանումով ու տարանցմամբ:*

**6. Եթէ նախորդ հարցի երկրորդ մասի պատասխանը դրական է, ապա յատկապէս ո՞ր թմրամիջոցներն էք նախընտրում:**

*Դրական չէ:*

**7. Քանի՞ երկրի լրտես էք:**

*Եթէ նկատի ունենանք «լրտես» եզրի առաջին բաղադրիչի՝ լուրի, աւետիսի դրական իմաստները, ուրեմն Րաֆֆի Յովհաննիսեանն ապագայ ծաղկուն Հայաստանի «լրտեսն» է կամ աւետաբերը՝ փթթող անօրինութիւնների ներկայ Հայաստանում: Նա պատմականօրէն օտարի ու այս վերջին տարիներին՝ նաեւ սեփական վայ-կառավարիչների կողմից եւրոպական, ասիական, ամերիկեան, ափրիկեան աշխարհամասերում տարագիր դարձած ու այնտեղ հաստատուած հայրենասէր հայութեան տունդարձածի լուրը բերող եղբայրն ու զաւակն է, որը բարձրաձայնում է առ այն, թէ ինչպիսին պէտք է լինեն մեր երկիրը, նրա քաղաքացին: Հատուածականացուած ազգի շահերի ու իղձերի կրողը, համազգային դժբախտութեան պատճառով ու Աստծոյ կամօք տարագրութեան մէջ ծնուելը, բայց յետոյ հայրենադարձուելն ու սեփական պետականութեանը նպաստ բերելը եթէ լրտեսութիւն է, ապա հարցի պատասխանը թողնում ենք Ձեր, Ձեզ պէս մտածողների եւ ընթերցողի խղճին ու դատին:*

**8. Նախորդ հարցի պատասխանը կապ ունի՞ արդեօք Ձեր՝ Հայաստանում բնակուելու հետ:**

*Արդէն պատասխանեցինք՝ այո:*

**9. Օրինակա՞ն է արդեօք Ձեր ղեկավարած կենտրոնի գործունէութիւնը: Որտե՞ղ են հրապարակուել կենտրոնի ֆինանսական գործունէութեան հաշուետուութիւնները եւ ներառո՞ւմ են դրանք օտարերկրեայ հետախուզութիւններից ստացուած գումարները:**

*Օրինական է: Տարբեր ժամանակներում կենտրոնի ֆինանսական գործունէութիւնը ներառել է այնպիսի «հետախուզական ծառայութիւններից» ստացուած գումարներ, ինչպիսիք են Լինսի հիմնադրամը՝ յանձինս պանծալի հայորդի ու բարերար Քըրք Քըրքորեանի, Հայաստանապաշտ հազարաւոր այլ նուիրեալները, նրանց ուստրերն ու*

*Շարբ. էջ 17*





## ՔԱՂԱՔԱԿԱՆ

# «ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ»

### ՎԵՐՋԱԲԱՆ

**Ծ.Խ.** Սոյն յօդուածը Դոկտ. Փրոֆ. Գէորգ Խրլոպեանի «ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ» երկասիրութեան վերջաբանն է: Գիրքը կը հրատարակուի Պէյրութի մէջ Միմի եւ Արմէն Յարութիւնեանի մեկենասութեամբ եւ Դոկտ. Երուանդ Քասունիի խմբագրութեամբ:

***ՏՕՔԹ. ՓՐՈՖ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ***

*Հայերի Ցեղասպանութեան հարցի ուսումնասիրութեան եւ լուծման գործընթացը, ինչպէս նկատեցինք, վերջին դարաշրջանում անցաւ բազմաթիւ փուլերով: Ան մոռացուած կամ սպիացած անհաւոր վէրքից հասաւ մինչեւ օրակարգի վրայ դրուած հրատապ հարցի: Ան մերթ կորսուեց դիւանագիտական խորխորատներում եւ մէկ էլ հրապարակ իջաւ որպէս ակնյայտ ռազմական ու ստրատեգիական խնդիրն մերթ վերածուեց աստղի նման փայլատակող հարցի, մէկ էլ վերածուեց կայուն կանխորոշիչ համաստեղութեան: Եղան պահեր՝ երբ Հայերի Ցեղասպանութեան յիշատակումը նկատուեց ազգերի միջեւ թշնամանք հրահրելու միջոց, ժողովուրդների բարեկամութեանն անյարիր երեւոյթ, ապապատմական ու արժէքազրկուած փորձ, հակահայրենասիրական վնասակար արարք: Մէկ էլ այն դարձաւ մարդասիրութեան, հայրենասիրութեան դրսեւորում, մարդկային իրաւունքի համար ու ճշմարտութեան բացայայտման համար մղուող պայքարի դրսեւորում: Այս տեղատուութեան ու մակընթացութեան ալիքներում այն երբեք այնքան չի միջազգայնացել, որքան այսօր:*

*Այսօր Հայերի Ցեղասպանութեան հարցը լոկ հայկական չէ: Այն լոկ ազգային հարց չէ: Այն միայն Օսմանեան ու Թրքական լծի դէմ պայքարած ու պայքարող ժողովուրդների դարաւոր պատմութեան դառնագոյն ու դաժանագոյն խտացումը չէ: Այն զուտ տեղական՝ Կովկասեան, Փոքր Ասիական, «Անատոլիական», Միջին Արեւելքի պատմութեանը չի վերաբերում: Երբ ուսումնասիրում ենք 19-21 դարերի Անգլիայի, Պելճիքայի, Գերմանիայի, Իտալիայի, Հունգարիայի, Աւստրիայի, Ֆրանսայի, Լեհաստանի, Ռուսաստանի, Ուքրանիայի, քաղաքական պատմութիւնը, այդ երկրների միջազգային յարաբերութիւնների դիւանները, նրանց ստանձնած իրաւական, բարոյական ու տնտեսական պարտաւորութիւնները, ապա բացայայտ են դառնում այն առնչութիւնները, որ Եւրոպական աշխարհը ունի Հայերի Ցեղասպանութեան տարբեր երեսների հետ: Երբ վերլուծում ենք Եւրոպական երկրների վեհաժողովների (Լոնտոնեան, Սանտ Ստեֆանոյի, Պեռլինի, Փարիզի, Սեւրի, Լօզանի, Ազգերի Լիգայի, Թեհրանի, Յալթայի, Պոտսդամի, ՄԱԿ-ի, Եւրոմիութեան եւ այլնի) նիւթերը այնտեղ նոյնպէս կը բացայայտենք Եւրոպական եւ միջազգային կեանքի անխզելի կապը Հայերի Ցեղասպանութեան բազմաթիւ կողմերի հետ: Վերջին 70 տարիների ընթացքում Եւրոպայում արձանագրուած ողջակիզումը, ցեղասպանութիւններն ու ազգային մաքրագործումները ուսումնասիրելիս գիտնականները եզրակացնում են, որ եթէ Հայերի Ցեղասպանութիւնը իր ժամանակին համակողմանի ուսումնասիրութեան ենթարկուէր եւ այդ հիման վրայ միջոցներ ձեռնարկուէին ապագայ ցեղասպանութիւնները կանխելու ուղղութեամբ, ապա Եւրոպան ազատ կը լինէր այն ոճիրից: Պատմաբանները նաեւ նշում են, թէ ինչպէս հիթլէրականներն ու միւս ֆաշականները օգտուել են Թուրք Ջարդարարների փորձից:*

*Համաշխարհայնացման միտում է արձանագրւում ոչ միայն քաղաքական իշխանութեան տարածման, գիտելիքների սփռման, տնտեսական արդիւնաբերութեան եւ տեխնոլոգիայի ասպարէզներում, արուեստի ու ապրելակերպի ու մարդկային յարաբերութիւնների կարգաւորման ոլորտներում, այլ նաեւ չարիքի, բռնութեան, ոճրագործութեան, ահաբեկչութեան ու ցեղասպանութեան գործադրման բնագաւառներում: Ամէն մի աննկատ ու անպատիժ մնացած բացասական արարք նպաստում է չարիքի, ըստ որում ցեղասպանութեան, վերարտադրութեան ու համաշխարհայնացման: Այս առաւել ընդգծուածութեամբ նկատելի է Օսմանեան Կայսրութիւնում ու Թուրքիայի Հանրապետութիւնում գործադրուած ու գործադրուող համապատասխան արարքների ուժականութեան ու միտումի մէջ:*

*Միջազգային դիւանագիտական յարաբերութիւններում ստեղծուել է վերոյիշեալ գործընթացներին հակադրուող, դրանք չէզոքացնել միտող մի աւանդոյթ: Թէեւ այն աստիճանաբար թուլանում ու այլակերպւում է, բայց յաճախ զգալ է տալիս էապէս:*

*Եւրոպական քաղաքական թատերաբեմի գլխաւոր դերակատարներից իւրաքանչիւրը (Անգլիան, Ֆրանսան, Գերմանիան, Աւստրիա-Հունգարիան, Ռուսաստանը) ժամանակի ընթացքում մշակեցին մի այնպիսի քաղաքականութիւն, որը մի կողմից ձգտում էր ապահովել Թուրքիան արտաքին միջամտութիւններից ու վտանգներից, իսկ միւս կողմից՝ Օսմանեան կայսրութիւնը խոցելի դարձնել միայն իր համար: Այսպիսով, Թուրքիան միշտ ունեցաւ ինչպէս չկամեցողներ, այնպէս էլ պաշտպաններ, որոնք երբեմն փոխում էին իրենց դերերը: Թուրքիան միշտ հանդէս էր գալիս որպէս նրանցից մէկի կամ մի քանիսի ստրատեգիական դաշնակից: Պալքանների ու Արեւմտեան Եւրոպայի ժողովուրդների ազատագրական պայքարի նկատմամբ այդ կեցուածքը նուազ սրութեամբ էր գործադրւում, որովհետեւ այս պայքարի յաղթանակը թուլացնում էր Թուրքիան առանց մասնաւորապէս չուժեղացնելով դերակատարներից որեւէ մէկին: Իսկ Հայկական Լեռնաշխարհում հայերի կողմից առաջադրուած բարենորոգումների ծրագիրը աւելի նպաստաւոր էր նկատւում Ռուսիային, որի համար էլ միւս դերակատարները աւելի ընդդծում էին Թուրքիայի «ստրատեգիական բարեկամ» լինելու իրենց հանգամանքը: Հարցը աւելի էր սրւում, երբ խնդիրը վերաբերւում էր այդ տարածքների ազատագրման ու հայկական պետականութեան վերականգնման: Այնքանով, որքանով գերապատուութիւն էր տրւում «հաւասարակշռուած քաղաքականութեան» Թուրքիայի «բարեկամները» կամ «պաշտպանները» կարողանում էին աւելի որոշիչ թրքամէտ քաղաքականութիւն պարտադրել: Սոյն իրադրութիւնը աւելի ընդգծուեց, երբ ձեւակերպուեց «Հայկական Հարց» հասկացութիւնը ու այն իր տեղը գրաւեց միջազգային դիւանագիտութեան մէջ որպէս օրակարգի հարց: Այն ակնյայտ դարձաւ Պեռլինի վեհաժողովի ընթացքում ու դրանից յետոյ:*

*Թուրքերի կողմից հայերի իրաւազրկման ու հետապնդումների քաղաքականութեան սկսեց վերածուել բռնագաղթի ու կոտորածների, երբ Օսմանեան Իշխանութիւնները ծրագրեցին Կիլիկիայի ու Հայկական Լեռնաշխարհի լեռնային շրջաններին իրենց շնորհած ինքնավարութիւնը բռնի ուժով վերացնել (Այդ քաղաքականութիւնը գործադրուեց Լեռնային Լիբանանում եւ այլուր): Լեռնականները դիմեցին ինքնապաշտպանութեան: Եւրոպական միջամտութիւնը թրքանպաստ էր եւ հիմք հանդիսացաւ 19-րդ դարի վերջի Հայկական Ջարդերին, որը Եւրոպայում ընդունուեց քաղաքական անտարբերութեամբ ու չէզոքութեամբ: Դրան յաջորդեց 1908-09-ի Կիլիկիայի Ջարդերը: Եւրոպան փաստօրէն պաշտպանեց «յեղափոխական Նոր Թուրքիան», «Թուրքիայում սահմանադրութեան հաստատման ջանքերը»:*

*Բ. Աշխարհամարտի նախօրէին Օսմանեան Կայսրութիւնում ապրող հայերը, ըստ որում Կիլիկիայի եւ պատմական Հայաստանի հայերը, իրենց կազմակերպութիւնների միջոցով խոստացան իշխանութիւններին հաւատարիմ մնալ Օսմանեան դրօշին ու Սահմանադրութեան: Նրանք իրենց խոստումը պահպանեցին: Իսկ Օսմանեան իշխանութիւնները Օսմանեան Կայսրութիւնում ապրող հայերի մեծամասնութեան ենթարկեցին ծրագրուած բռնագաղթի ու ցեղասպանութեան: Օսմանեան Կայսրութեան դուրս մնացած հայերը համագործակցեցին դաշնակից պետութիւն ների հետ ու դարձան հաւատարիմ փոքր դաշնակիցը: Նրանց խոստացուեց պատերազմի յաղթական աւարտից յետոյ, Օսմանեան Կայսրութեան տարբաժանումից յետոյ նկատի ունենալ Հայաստանի պետականութեան վերականգնումը պատմական Հայաստանի տարածքում: Թուրքիայի պարտութիւնից եւ 1915-18-ի Հայերի ցեղասպանութեան ծրագրի գործադրումից յետոյ Հայաստանի պետականութեան վերականգնման օրակարգին կցուեց նաեւ Օսմանեան Կայսրութիւնում ապրած հայերի զանգուածային ջարդի, նրանց բռնագաղթի եւ նրանց գոյքի անօրինական բռնագրաւման (զանգուածային կողոպուտի) հարցերը: Միջազգային համապատասխան ատեանների առաջ որպէս հայցուոր, իրաւատէր ներկայացան ինչպէս Դաշնակիցների հետ համագործակցած հայերը, այնպէս էլ Օսմանեան իշխանութեան տիրապետութեան տակ բնակուած ու ջարդի եւ բռնագաղթի ենթարկուածների մնացորդացը:*

*Սկզբնական շրջանում խիստ հաւանական էր երեւում հայերի ծրագրերի ու երազանքների իրականացումը: Յանկարծ փոխուեց շրջանի աշխարհաքաղաքականութիւնը, երբ Ռուսաստանում ու նրա ազդեցութեան գօտում յաղթանակեց Պոլշեւիկեան Յեղափոխութիւնը եւ Թուրքիայում հանդէս եկաւ Մուսթաֆա Քեմալի ազգայնական շարժումը: Թուրքիայի պաշտպան դարձան Անգլիան, Ֆրանսան, ԱՄՆ-ը, եւ Պոլշեւիկեան Ռուսաստանը: Մի ակնթարթում մոռացուեցին հայերին, յոյներին, իտալացիներին տրուած*

*Շար.ը էջ 18*


## VALENTINE'S DAY CELEBRATION

**ՎԱԼԸՆԹԱՅՆԻ ՕՐՈՒԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ԽՐԱԽՃԱՆՔ**

Կազմակերպութեամբ՝

**Հ.Մ.Մ.Ի Տիկնանց Օժանդակ Մարմնի**

Երեկոն պիտի խանդավառէ Լիբանանէն հանրածանօթ սիրուած երգիչ՝

**ՀՐԱՉ ՊՕՂԱՐԵԱՆ**

Եւ իր նուագախումբը

Մասնակցութեամբ՝

**D.J. KOKO**

Նախ. համեղի անակնկալներ

Շաբաթ, 11 Փետրուար 2006

երեկոյեան ժամը 8էն սկսեալ

Հ.Մ.Մ. «Կարօ Սողանալեան» սրահին մէջ՝

1060 North Allen Ave. Pasadena

Մուտքի նուէր՝ $35.00

Տոմսերու համար հեռաձայնել՝

Կարինէին (626) 755-4773

**ԳԱՂՈՒԹԱՅԻՆ**

# ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՆԴԷՍԸ

*ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ*

Հայ Քոյրերու Վարժարանը Դեկտեմբեր 2005ին անգամ մը եւս մտաւ տօնական մթնոլորտի մէջ, ի պատրաստութիւն Մանկացեալ Քրիստոսի Ծնունդին: Այս առթիւ աշակերտութիւն, պաշտօնէութիւն, ծնողք եւ ուսուցիչ բոլորը լծուած էին հեւքոտ եւ բծախնդիր աշխատանքի դիմաւորելու համար Ամանորն ու Ս. Ծնունդը:

Արդարեւ, համաձայն աւանդութեան՝ Շաբաթ, Դեկտեմբեր 17ին ժամը 11ին Հ. Ք. Վարժարանի սրահը լեցուած էր խուռներամ բազմութեամբ, հայրեր, մայրեր, մեծ հայրեր եւ մեծ մայրեր բոլորը անհամբեր էին տեսնելու իրենց թոռներն ու զաւակները՝ փոքրիկ դերասանները, որոնք պիտի ներկայացնէին Յիսուսի Ծնունդը բոլոր մանրամասնութեամբ:

Հանդէսը պաշտօնապէս սկիզբ առաւ մանկապարտէզի պատասխանատու Տիկ. Սոնա Գազանճեանի բարի գալուստի խօսքով, որուն անմիջապէս յաջորդեց մանկապարտէզի աշակերտներու բեմադրութիւնը: Իսկապէս, մօտաւորապէս 80 փոքրիկներ միաժամանակ բեմ բարձրացնել, իւրաքանչիւրը ըստ իր դերին պատրաստելը եւ ըստ իր դասարանին դեր տալը բաւական հմտութիւն կը պահանջէր: Ընդհանրապէս մանկապարտէզի աւարտական դասարանն էր որ կը բեմականացնէր թատրոնը, իսկ աւելի փոքր երկու դասարաններու աշակերտները կը մասնակցէին երգելով եւ պարելով, որոնց դաշնամուրի վրայ կ՛ընկերակցէր վարժարանիս երաժշտութեան դասատու՝ Տիկ. Վարդուհի Պաղտասարեան:

Սքանչելի էր վերջին պատկերը երբ «Մարիամ» Մանուկ Յիսուսը գիրկը եւ «Յովսէփ» շրջապատուած մոգերով, հովիւներով եւ ժողովուրդի ներկայացուցիչներով՝ աւետեցին Յիսուսի Ծնունդը՝ երգելով Ամանորի երգեր եւ Ծննդեան շարականներ:

Ուսուցիչներու եւ պատասխանատուներու հեւքոտ եւ բծախնդիր աշխատանքը իր նպատակին հասած էր, փոքրիկ դերակատարներ իրենց անմեղ խաղարկութեամբ թափանցած էին այդ մեծ խորհուրդին եւ փոխանցած էին զայն նաեւ մեզի՝ մեծերուս:

Հանդիսութիւնը փակուեցաւ վարժարանի Տնօրէնուհի՝ Առաքինազարդ Քոյր Լուսիայի շնորհակալական եւ շնորհաւորական խօսքերով:

### Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

Շնորհաւորելի գաղափար էր Տօնական օրերու նախօրեակին աշակերտական երգչախումբ մը կազմակերպելը, յատկապէս պատրաստուած, ամսուան թելադրանքը եղող՝ Ամանորի երգերով եւ Ծննդեան շարականներով: Այս ծրագիրը կարելի եղաւ իրագործել, շնորհիւ վարժարանի երաժշտութեան դասատու՝ Տիկ. Վարդուհի Պաղտասարեանի վարժ, հմուտ եւ ժրաջան աշխատանքին, տնօրէնութեան բծախնդիր հետապնդումներուն եւ ուսուցչական կազմի աջակցութեան: Կարելի եղաւ կարճ ժամանակի ընթացքին յաջողցնել գեղեցիկ յայտագիր մը որ ծնողներուն եւ հանրութեան ներկայացուեցաւ 22 Դեկտեմբերին հաճոյքի պահեր ընծայելով ներկաներուն:

Երգչախումբը կայացաւ երկու մակարդակներով, առաջին հերթին ներկայացան առաջինէն չորրորդ դասարանի աշակերտները, որոնց յաջորդեցին հինգերորդէն ութերորդի պատանիները: Անոնք երգեցին երեք լեզուներով, երբեմն քառաձայն եւ միշտ ապրումով: Յատկանշական էր մեներգողներու յաջողութիւնը, որուն մէջ մեծ բաժին ունէր ճշգրիտ ընտրութիւնը: Մեծ խանդավառութեամբ ընդունուեցաւ վերջին ներկայացումը, ուր մենակատարները զանգակներով «Jingle Bells»ի նախերգանքը ըրին, որուն յաջորդեց խմբերգը՝ հանդիսատեսի խանդավառութիւնը հասցնելով հաճոյքի գագաթնակէտին:

Մաղթելի է, որ իր տեսակին մէջ առաջինը հանդիսացող այս ծրագիրը նախավկան ըլլայ յառաջիկայ նորանոր յաջող աշակերտական երգչախումբերու, որոնք ոչ միայն աշակերտներուն հոգիները կը լեցնեն օրուան խորհուրդով, այլ անոնց մէջ կը զօրացնեն լեզուական եւ երաժշտական հմտութիւն ու կը վարժեցնեն խմբային աշխատանքի: Եւ ազնուացնելով անոնց միտքն ու հոգին գիրենք կ՛առաջնորդեն դէպի ձգտումն գեղեցիկին եւ ազնիւին:



Հայ Քոյրերու Վարժարանի աշակերտները ելոյթի պահուն

# ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Հայերէն Այբուբենի ստեղծման 1600ամեակի համազգային տօնախմբութիւններու ծիրէն ներս (2005), Միացեալ Նահանգներու Հայ Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի հովանաւորութեամբ եւ կազմակերպութեամբ, Burbankի Woodbury համալսարանէն ներս (Cabrini Hall) տեղի պիտի ունենայ միօրեայ գիտաժողով մը «Հայերէն Աստուածաշունչը» խորագիրով:

Այս կարեւոր ձեռնարկի իրականացման կը գործակցին նաեւ Woodbury եւ Claremont համալսարանները:

Թուական.- Շաբաթ, Փետրուար 25, 2006:

Ժամ.- Առաւօտեան 9.30էն մինչեւ 4.30:

Պիտի մասնակցին եօթը մասնագէտներ:

Հինգ զեկոյցներ՝ անգլերէն եւ երկու զեկոյցներ՝ հայերէն լեզուներով: Չորս զեկոյցներ՝ առաւօտ եւ երեք զեկոյցներ՝ կէսօրէ ետք:

Գիտաժողովը պիտի վարէ Փրոֆ. Պառլօ Տէր-Մկրտիչեան:

Գիտաժողովի պատասխանատու նշանակուած են.- Փրոֆ. Պառլօ Տէր-Մկրտիչեան եւ Հոգշն. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան:

Սբ. Գիրքը՝ Քրիստոնէական Վարդապետութիւնը բացատրող իբր միակ խարիսխ իր իսկական նպատակին ծառայեցնելու անհրաժեշտութիւնը լաւ ըմբռնեցին Ե. դարու Հայ Եկեղեցւոյ Սուրբ Հայրերը եւ այս մէկը չանգիտացան երբեք: Այս հիմնական գիտակցութիւնն էր ահա՝ որ մղեց եւ յորդորեց զանոնք Աստուածաշունչը հայացնելու կենսական եւ անյետաձգելի աշխատանքին:

Գիտաժողովին նիւթերը առընչուած են Աստուածաշունչին վերաբերող հետաքրքրաշարժ հարցերու:

Մուտքը ազատ է հանրութեան:

# ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Առաջնորդ Սրբազան հօր՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի որոշումով, Երկուշաբթիէն Ուրբաթ, առաւօտեան ժամը 8:00ին եւ երեկոյեան ժամը 4:30ին Առաջնորդարանի Արմէն եւ Կլորիա Համբար Դահլիճին մէջ կը կատարուի ժամերգութիւն:

1807 W. Glenoaks Blvd., Suite 202
Glendale, CA 91201

Tel.: 818/502-3233
Fax: 818/502-3244
Pgr.: 818/608-9898
info@excelhye.com
www.excelhye.com

HYE INSURANCE SERVICES

AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

Enclosed a check for (one year) * $50,00 for USA
* $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.
* $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.

Name: ----------------------------------------

Address: ---------------------------------------

City: --------- State:--------- Zip Code:------

Country: -------------

Tel :----------------------- Fax : -------------------------

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ

## ՌՈՄԵՐՈ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 25-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՒ

*ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ*

*1980 թուականի Մարտի 30-ին էր: Սան Սալվադորի հոգեւոր առաջնորդ՝ արքեպիսկոպոս Օսկար Առնուլֆօ Ռոմերոն սուրբ Պատարագ էր մատուցում:*

*Փոքրակազմ, հանդարտաբարոյ եւ ժողովրդի հետ շփուելիս մի քիչ ամաչկոտ այդ եկեղեցականի կատարած ծէսերին հաւատացեալները սիրում էին խուռներամ բազմութեամբ ներկայ գտնուել, քանզի նրա դէմքից սրբութիւն էր ճառագում՝ ջինջ հաւատի յորդառատ լոյսը, որը ջերմեռանդութեան զգացումներով էր լցնում ներկաների հոգին: Նրա քարոզները բոցաշունչ էին, համարձակ, անկեղծ եւ անմիջական:*

*Այդ օրը արքեպիսկոպոս Ռոմերոն, նախապատրաստական աղօթքներից յետոյ. ուրայատուկ ներշնչումով սկսեց իր քարոզը եւ, ի միջի այլոց, ասաց.*

*«Մարդն իր անձը չպէտք է այնքան շատ սիրի, որ փորձի միշտ խուսափել կեանքի ընթացքում հանդիպող վտանգները դիմագրաւելուց: Ընդհակառակը, նա, ով յանուն Քրիստոսի, նոյնիսկ իր սեփական անձի ապահովութիւնը վտանգում է ի ծառայութիւն իր մերձաւորի, ի պաշտպանութիւն նրա իրաւունքների, այդպիսին կ'ապրի, ինչպէս ցորենի հատիկը, որ գետին ընկնելով՝ մեռնում է, սակայն միայն երեւութապէս է մեռնում: Եթէ այդ հատիկը չմահանայ՝ ինքն առանձին կը մնայ, իսկ եթէ հունձք կայ՝ նշանակում է, որ հատիկը դրա համար զոհել է ինքն իրեն՝ ընկնելով հողի մէջ»:*

*Նա ապա շարունակեց. «Քրիստոսի պատարագուած այս մարմինն ու վասն մարդկութեան հեղած արիւնը՝ մեզ համար թող լինեն հոգեւոր սնունդ, որպէսզի մենք էլ նրա նման տանք մեր մարմինն ու արիւնը՝ մեղմելու համար ժողովրդի վիշտն ու տառապանքը: Զապրենք մենք մեզ համար, այլ լինենք արդարութեան օրինակ եւ խաղաղութեան պատգամաբեր մեր ժողովրդի համար...»:*

*Այդ պահին լսուեց կրակոցի ձայն...*

*Արքեպիսկոպոսը դեռ շատ ասելիք ունէր, բայց չհասցրեց: Չհասցրեց նոյնիսկ հաղորդուել Յիսուսի կենարար մարմնով եւ արեամբ, այլ հենց ինքը, իր մատուցած Պատարագի ընթացքում, դարձաւ զոհ՝ արիւնլուայ ընկնելով սուրբ Խորանի վրայ:*

*Էլ Սալվադորի տառապած ու կեղեքուած ժողովուրդը սգաց իր սիրելի հոգեւոր առաջնորդի դառնակսկիծ մահը: Նոյնիսկ նրա գլխաւոր հակառակորդներից շատերը, լինեն դրանք ծայրայեղ աջակողմեան կամ յեղափոխական տարրեր, գլուխ խոնարհեցին նրա սրբազան յիշատակի առաջ: Նրա շիրիմը դարձաւ համազգային ուխտատեղի:*

*Ռոմերո արքեպիսկոպոսին չէին հանդուրժում օրուայ իշխանաւորներն ու յատկապէս նրանց ետեւում թաքնուած օլիգարխները, որոնք բռնանում էին պարզ ժողովրդի վրայ, խլում էին նրա արդար վաստակը, արգելք էին հանդիսանում նրա տնտեսական ու մշակութային զարգացմանը, որպէսզի միշտ կարողանան շահագործել եւ ստրկութեան մէջ պահել այդ հսկայ զանգուածին: Այդ պատճառով էլ հալածում կամ սպանում էին կրօնական ու աշխարհական այն գործիչներին, որոնք անկեղծ նուիրումով փորձում էին պաշտպանել իրաւազրկուածների շահերը եւ ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածում:*

*Ձախակողմեան ուժերն էլ դժգոհ էին արքեպիսկոպոսից, քանի որ նա բոլորովին դէմ էր մարքսիստական գաղափարախօսութեանը եւ զինուած պայքարին: Նա չէր ուզում արիւնահեղութեամբ իշխանափոխութիւն կատարել եւ մի բռնապետութիւնը միւսով փոխարինել: Նա պայքարում էր խաղաղ միջոցներով սթափեցնել բռնաւորների խիղճը՝ մատնանիշ անելով նրանց անմարդկային եւ, հետեւաբար, հակաքրիստոնէական արարքները:*

*Բարեբախտաբար, պէտք է ասել, որ ժողովրդի եւ կղերականների մեծ մասը հաւատարիմ մնաց իր սիրելի առաջնորդին: Վերջինս, սակայն, հիասթափուել էր Վատիկանի քաղաքականութիւնից՝ ասելով, թէ ուրիշ անգամ էլ ինքը չի գնայ Հռոմ, քանի որ այնտեղ բարեկեցիկ պայմաններում ապրող կրօնական ղեկավարներին երբեք չէր յուզում հալածուածների դառը ճակատագիրը:*

*Տնտեսական բազմաթիւ ազդեցիկ շրջանակներ, ինչպէս նաեւ մի քանի փափկասուն եպիսկոպոսներ ու քահանաներ, գործի լծուեցին զրպարտութիւններով վարկաբեկելու Ռոմերո արքեպիսկոպոսին՝ յաչս իր հօտի եւ Վատիկանի: Բայց արքեպիսկոպոսը կարեւորութիւն չընծայեց այդ անխիղճ յերիւրանքներին եւ նոյնիսկ Վատիկանի սպառնալիքներին:*

*Այնուհետեւ, երբ տեսան, թէ զրպարտութիւնն ու սպառնալիքը չեն ազդում այդ քաջարի եկեղեցականի վրայ, փորձեցին կաշառել նրան: Երկրի Նախագահը մի շքեղ աւտոմեքենայ նուէր ուղարկեց նրան, սակայն Ռոմերոն մերժեց ընդունել այն: Նա իր խղճին ու սկզբունքին դէմ էր համարում թշուառ մարդկանց կեղեքողների ձեռքից որեւէ նուէր ստանալը, ինչպէս նաեւ Էլ Սալվադորի նման մի երկրում, ուր ժողովրդի մեծամասնութիւնը աղքատ է, նման մի մեքենայով շրջելը կամ ճոխ պայմաններում ապրելը:*

*Արքեպիսկոպոսի համոզմամբ իւրաքանչիւր քրիստոնեայի գլխաւոր պարտականութիւնն է խեղճերին եւ իրաւազրկուածներին պաշտպանելը: Աստծուն միացած անձը չի կարող անտարբեր լինել ուրիշի նկատմամբ: Նա իրաւունք չունի մորթապաշտ լինել եւ բռնութիւնների ու անարդարութիւնների դիմաց լուռ մնալ: Մանաւանդ քրիստոնեայ հոգեւորականը պէտք է լինի անկաշառ, արդարասէր եւ արդարատենչ: Կրօնական վերնախաւի վատ օրինակները երիտասարդ ու նորընծայ հոգեւոր սպասաւորների համար երբեք չպէտք է լինեն գայթակղիչ կամ յաջողութեան չափանիշ: Յատկապէս այսօր, քրիստոնեայ հոգեւորականը, իր հոգեբանութեամբ ու կենցաղով, պէտք է տարբեր լինի աշխարհական իշխանաւորներից կամ սովորական մահկանացուից, որպէսզի կարողանայ առաջնորդել, պաշտպանել, օգնել եւ փրկել նրանց:*

*Բայց մենք վախենում ենք հէնց դրանից, ուրիշներից տարբեր լինելուց, որպէսզի ոչ ոք չխանգարի մեր հանգիստը, ոչ ոքի հետ խնդիր չունենանք, այլ միայն մեր անձնական ապահովութեան ու հանգստի մասին մտածենք: Դրա համար էլ երբեք չզարմացայ, երբ անցեալները, մամուլում, կարդացի մի տարեց եկեղեցականի խօսքը իր յոբելեանի առթիւ, ուր ասում էր. «Եթէ հնարաւոր լինի նորից ծնուել, ես դարձեալ պիտի ուզէի կրօնական դառնալ, քանի որ իբրեւ այդպիսին ես մեծ դժուարութիւնների չեմ հանդիպել, ջանացել եմ միշտ խուսափել որեւէ մէկի հետ խնդիր ունենալուց եւ շարունակ արժանացել եմ իմ շրջապատի յարգանքին ու պատուին»:*

*Կ'ուզենայի ասել այս աշխարհում խուսանաւելու գերաշնորհութեամբ օժտուած նման վսեմաշուք եկեղեցականներին, որ լաւ կը լինի, եթէ իրենք ձեռք քաշեն քրիստոնէութիւնից, քանզի ինչպէ՞ս կարելի է չտանջուել, դժուարութիւնների եւ երբեմն նոյնիսկ հալածանքների չհանդիպել, երբ Քրիստոսի մարդասիրական պատգամն ես քարոզում մի այնպիսի միջավայրում, ուր բարքերի ապականութիւնը խեղդում է թշուառների, սննդակարօտ երեխաների, արհամարհուած բազմաթիւ մտաւորականների ճիչն ու աղաղակը, ուր կեղծիքն ու շողոքորթութիւնը բեմ են բարձրանում, ուր օրաւուր նահանջում է մայրենի լեզուն, ազգային արժէքների հանդէպ յարգանքն ու նախանձախնդրութիւնը:*

*Եթէ ճշմարտութիւնն ասելու լինես, կառուցողական քննադատութիւններ անես, վստահաբար պիտի ենթարկուես ազգիդ վատասիրտ վերադասների դաժան հալածանքին: Նախ պիտի փորձեն սպառնալիքներով վախեցնել քեզ, ապա՝ կաշառել, ինչպէս որ վարուեցին Ռոմերո արքեպիսկոպոսի հետ, իսկ չկաշառուելու դէպքում կը սկսեն զրպարտել քեզ, արհամարհել կամ ծաղր ու ծանակի ենթարկել: Կարող է պատահել, որ մերձաւորներդ անգամ քեզ քննադատեն, որ ճկուն չես, դիւանագիտութիւն չունես, բայց դու չպէտք է յետ նայես. «Ոչ ոք ձեռքը մաճի վրայ կը դնի եւ ապա յետ կը նայի» (Ղուկաս Թ 62), չպէտք է կոչմանդ եւ Աստծուդ դաւաճանես, չպէտք է*



*Արքեպիսկոպոս Օսկար Առնուլֆօ Ռոմերօ*

*վախենաս չհասկացուելուց կամ լքուածութիւնից, զի մեր Տէրն էլ խաչի վրայ լքուած էր իր սիրելի աշակերտներից, բայց նա յաղթեց աշխարհին, այսինքն՝ մեղքին, մահուան ու սատանային:*

*Քրիստոնեայ լինել չի նշանակում անպայման անփորձանք կեանք ունենալ, փափկութեան ու վայելքի մէջ ապրել: Սկզբից եւեթ քրիստոնէութեան հիմնադիրը շատ պարզ ու յստակ ասել է. «Աշխարհում նեղութիւն պիտի ունենաք»: Իհարկէ մենք չենք փնտռում նեղութիւն կամ տառապանք, բայց դրանք այս աշխարհում մեզ բաժին են դառնում: Հարցը նրանում չէ, թէ ինչպէ՛ս պէտք է խուսափենք դրանցից, այլ հարցն այն է, թէ ինչպէ՞ս պիտի դիմագրաւենք դրանք, ո՞ւմ հետ պէտք է դաշնակցենք: Արդարեւ մեր միակ դաշնակիցը նա է, ով յաղթեց աշխարհին, մեղքին, մահուան ու սատանային:*

*Մենք էլ, միացած Քրիստոսին եւ զօրացած նրանով, քրիստոնէական սրբազան յանձնառութեամբ մեր կեանքը ի սպաս դրած մեր ազգի բարօրութեանը, մի օր էլ անպայման իրաւունք կ'ունենանք Տիրոջ նման պատգամել գալիք սերունդներին. «Քաջալերուեցէ՛ք, մենք յաղթեցինք աշխարհին»:*

*Իսկ Սան Սալվադորի արքեպիսկոպոս Ռոմերոն եղաւ ճշմարտապէս այս աշխարհին յաղթող երանելի վկաներից մէկը:*





**ԼՈՅՍ ՏԵՍԱՒ**
**Սահակ Թութճեանի**
**«ԱՐԵՒԸ ԼԵՌԱՆ ԵՏԻՆ»**
**Հայրենական Օրագիրը**

**Ստանալու համար դիմել հեղինակին՝**
**Հեռ. (818) 563-6174**

**կամ հետեւեալ գրախանութները Կլենտէյլի մէջ**
**Ապրիլ՝ (818) 213-4112**
**Պերճ՝ (818) 244-3830**
**Սարդարապատ՝ (818) 500-0790**

# ՉԽԱՄՐՈՂ ՓԱՌՔ... «ՉԷՅԹՈՒՆԻ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՈՒԷՏԻՈՅ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ»

*ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ*
*(Շարունակուած նախորդ թիւէն)*

Կառավարութիւնը իրազեկ եղել էր ժողովուրդի լեռ բարձրանալուն: Այն կասեցնելու համար անմիջապէս զինուորներ չէին ուղարկել, որովհետեւ իշխանութիւնները Մուսա Լեռցիներից վախ չէին ունեցել: Այո, քանի որ մի քանի ամիսներ առաջ, Մարտ 28ին, գիւղերը պաշարելով խուզարկութիւններ էին կատարել եւ միայն սակաւաթիւ հին հրացաններ էին յայտնաբերած եղել: Կարծել էին, որ հարիւր զինուորներով որեւէ ժամանակ կարող էին լեռներից վար իջեցնել ժողովուրդին: Այդպէս էր պարզեցրել միւտիւր Խալիտը եւ մարտավարել էր առայժմ միայն սուտ խոստումներով խաբել նրանց:

Օգոստոս 2ին երեք գիւղերի ամբողջ բնակչութիւնը եւ Քէպուսիէից 8-10 ընտանիքներ՝ յանդուգն Քասամանեանների գլխաւորութեամբ, իրենց լերան վրայ էին, իսկ Պիթիասցիք ու Հաճի-Հապապլիցիները դեռ լրիւ լեռ բարձրացած չէին եղել:

Մի քանի օր յետոյ միւտիւրը երրորդ գրութիւնն էր ուղարկել, ուղղուած Տէր Աբրահամ Տէր Գալուստեանին եւ Մելքոն Աղա Գույումճեանին՝ պահանջելով նրանցից ժողովուրդին համոզելու իրենց գիւղերը վերադառնալ:

Ժողովուրդը հաստատուած էր եղել Գըզըլճա, Գուզճըղած, Տամլաճըգ եւ Գափլան Տուղազը կոչուած վայրերի մէջ: Իւրաքանչիւր վայրում ժողովներ էին գումարած եղել՝ զինուորական կարգադրութիւններ անելու եւ ներքին գործերը կառավարելու համար, որոնց գլխաւորել էին իրենց գիւղերի երեւելիները: Գուզճըղազում էին հաւաքուել բոլոր այրերը, որոնց քաջալերելու եւ գալիք կռիւներին մասնակցելու մարտավարութեան համար ելոյթներ էին ունեցել Մովսէս Տէր Գալուստեանը եւ Մովսէս Գապայեանը: Ժողովում, քուէաթերթիկներով կատարուած գաղտնի քուէարկութեամբ եօթը անդամներից բաղկացած մարմին էին ընտրել, որը իր բոլոր լիազօրութիւններով հանդիսանալու էր որպէս «Կառավարական դահլիճ»:

Օգոստոս 5ին միւտիւրը, մի պատուիրակութեան հետ չորրորդ գրութիւնն էր ուղարկել՝ ուղղուած Հաճի Հապապլիի Տէր Վարդան Վարդերեսեանին, Հաճի Խաչեր Մարտիրոսեանին, Պատուելի Նուխուտեանին, Գէորգ Շէրպէթճեանին: Ապստամբները յախուռն կերպով մերժել էին նաեւ այն:

Պիթիասի պատուելի Նուխուտեանը առանձին տեսակցութիւն էր ունեցել Տիգրան Անդրէասեանի հետ, յորդորելով իրենց հնազանդիլ եւ թէ արդեօք իրենք վստահ էին որ պիտի կարողանային դիմադրել Թուրքերին եւ դիմակայել նրանց զօրքերի յարձակումները: Տիգրանն առարկել էր, որ պետութիւնը պատերազմի մէջ է եւ իրենց լեռները արշաւելու համար խոշոր զինուորական ուժեր չէին ուղարկելու եւ որ իրենք ի վիճակի էին դիմադրել մինչեւ երեք հազար Թուրք զօրքի յարձակումներին:

Մշուշ էր լեռը, արդեօք Մուշի սարերում Աստղիկի նման այն մշուշել էին Ջեւս աստուծոյ «Միւսիս» դուստրերը, այնտեղ հոլանի զբօսնելու համար: Խոնաւութիւնից պաշտպանուելու համար մաէն ընտանիք իրեն համար հիւղապատսպարաններ էին կառուցել, զօրանոցներ էին պատել:

Օգոստոս 7ին Թաթարալան վայրում ժողով էին գումարել եւ երբ հազիւ ատենապետ ու ատենադպիր էին ընտրել, լուր էին ստացել, որ Խալիտի առաջնորդութեամբ երկու հարիւրի չափ զինուորներ Եօլ-Աղըզըյի կողմից յարձակում էին ձեռնարկել: Լրացուցիչ կռուողներ էին շտապել մարտադաշտ, դեռ իշխանութիւնների երկիւղը չվանած նրանցից մէկը հարցրել էր թէ զինուորների վրայ պիտի կրակէին: Տիգրանը նրան սաստել էր թէ ուղիղ նրանց ճակատներին պիտի կրակել, որ ռազմամթերքը ի զուր չվատնուի: Ճակատամարտը վեց ժամ էր տեւել, թշնամին 5-6 մեռեալներ տանելով նահանջել էր, ոչ մէկ զոհ կամ վիրաւոր չէին ունեցել լեռնականները:

Յաջորդ օրերին, զինեալներին իրենց տասնապետներով բաժանել էին տասնեակների: Զօրանոցն արդէն պատրաստ էր եղել: Բանուորական ջոկատները կարեւոր կէտերի վրայ պատնէշներ էին կառուցել, խրամներ փորել, որոնց դիմաց 20-25 մեթր հեռաւորութեան վրայ անտառներն էին հատել թշնամուն նկատելու համար:

Պարտուած թշնամին շտապել էր նոր յարձակման շեփոր հնչեցնել: Օգոստոս 10ին արեւագալից քիչ յետոյ, Հաճի-Հապապլիի «Պագաճըգ» վայրի կողմից Թուրքերը երկու հազար զինուորներով գրոհ էին կազմակերպել: Այդ տեղամասի հայկական տասըհինգ հոգինոց պահակախումբը նահանջել էր: Թշնամին որոշակի առաջխաղացում էր կատարել, սակայն հայ քաջերը օժանդակ ուժերով արեւաշէկ մահացու գնդակներ էին տեղացել թշնամու զինուորների վրայ եւ ստիպել նրանց դադարեցնել յարձակումը: Այդ ընթացքում Պիթիասցի ութ ընտանիքներ, յիսուն երկու հոգի, փոխանակ ժողովուրդի համախումբ հաւաքավայրերից մէկին միանալու, ապաստանել էին «Ջօրլէն Խուփըրնէն» կոչուած մէկուսի վրայ: Թշնամին յայտնաբերել էր նրանց թաքնուած վայրը, մորթել էին ալեհեր Կիրակոս Գաէմեանին, կնոջը, Սիմա Մաղզէնեանին եւ նրանց թաքստոցին մօտիկ Հաճի Հապապլիցի Անդրէաս Ծուհուրեանին ու կնոջը, իսկ մնացածներին գերեվարել: Մօտակայ քարայրին մէջ ապաստանած էր եղել նաեւ նոյն գիւղից Գէորգ Ֆիլեանի ընտանիքը: Հրացանների ձայների մօտենալու Գէորգի կինը եւ չափահաս զաւակները փախել էին: Թուրքերը յայտնաբերել էին նրանց թաքստոցը, սպաննել էին մօրը եւ Գէորգին տարել հրամանատարի մօտ, հարցաքննելուց յետոյ հրամայել էր սպաննել նրան: Մարմինը վեց տեղերից սուինահար Գէորգը չէր մահացել, յետագային գտել էին նրան եւ փոխադրել ժողովուրդի բնակավայր: Ահա թէ ինչ վախճան էին ունեցել հաւաքական դիմադրութեան ու պաշտպանական կռիւներին չդիմողները:

Սակայն կատաղի ճակատամարտը տեղի էր ունեցել Պագաճըգից երեք մղոն հեռաւորութեան վրայ «Օմարէն Գիտէյն» վայրին մէջ: Թշնամին իր հետ բերած էր եղել երկու թնդանօթներ, որոնք անընդհատ ռմբակոծել էին հայերի հրացաններից բարձրացած ծուխի տեղանքները: Պաշտպանների իւրաքանչիւր գնդակին հետեւել էին թնդանօթների ու հարիւրաւոր մաուզէրների համազարկերը: Սակայն ամբողջ պատերազմի ընթացքին այդ ռումբերը չէին կարողացել էական վնաս պատճառել Մուսա Լեռցիներին, իսկ չպայթածները քակել էին եւ վառօդը ու հարիւրաւոր գնդակները օգտագործել որպէս իրենց ռազմամթերք:

Ճակատամարտը սկսելուց մի քանի ժամ յետոյ անձրեւ էր տեղացել: Այն շարունակուել էր կռուի ամբողջ ընթացքում: Թրջուել էին հագուստները, սակայն նրանց կռուելու ոգիները Վահագնի Յարդագողի ճանապարհին փայլատակող աստղեր: Անշուշտ թուրքն էր նաեւ թրջուել, սակայն հայոց զէնքերը ու զինամթերքը գրեթէ անգործածելի էին դարձել, իսկ հայերը իրենց լեռնականի լանջերով պատնէշացած էին եղել բարձունքների դիրքերը եւ թշնամին անկարող էր եղել առաջանալ: Պատերազմի դաշտում ոգին է յաղթանակում:

Քաջեր էին եղել բոլորը, սակայն մի յանդուգն դիւցազուն՝ Պետրոս Գալուստեան, կանաչ ճիւղերով քօղուած, սողոսկելով դիրք էր բռնել թնդանօթների դիմացի քառաժայռի ետին եւ հինգ կրակոցներով չորս թնդանօթաձիգների էր սպաննել: Ապա հրամանատարը ստիպուած նահանջի հրաման էր արձակել՝ ասելով որ նրանց յաղթել կարելի չէ:

Այդ ճակատամարտում Մովսէս Ադամեան, Փանոս Ֆասըլեան եւ Յակոբ Դաւիթեան վիրաւորուել էին, իսկ Յակոբ Գարակէօզեան (Ըլլէուն) եւ Պօղոս Անտէքեան զոհուել էին: Քաջազուն Ըլլէուն իր մահը դիւցազնութեամբ էր դիմագրաւել եւ երբ ծանր վիրաւոր վիճակով դիրքից հեռացրել էին իրեն, որպէս պատգամ սերունդներին էր թողել իր վերջին խօսքը՝ «Դուք ինձմով մի զբաղուէք, գացէք թշնամուն դիմադրեցէք»: Այս կռւում թշնամին հարիւր սպաննուած էր տուել եւ առաւօտեան լքելով դիրքերը հեռացել էր:

Տեղացած անձրեւը աղէտաբեր էր եղել նաեւ բնակավայրերի համար, ժողովուրդը հիւղակների պատրաստութիւնը դեռ աւարտած չէ եղել, թրջուել էին, թրջուել էր նաեւ իրենց հետ բերած ուտեստեղէնը: Առաւօտեան արեգակը իր կրակ վարսերով այրել էր ամպերը, ժպտացել, կարծես երկնային գորովագին ցնծութիւնն էր ցողում լեռնականների յաղթականած դէմքերին:

Օգոստոս 10ին թշնամու զօրք երեւացել էր նաեւ ժողովուրդի Գըզըլճայի համախմբման բնակավայրի մօտ, որոնք թշնամու յարձակում կարծելով այն, նահանջել էին դէպի Գուզճըղազ բնակավայր: Նախորդ ճակատամարտերի փորձը թելադրել էր որ ամուր դիմադրութիւն կազմակերպելու համար անհրաժեշտ էր իրենց ուժերը մէկ կեդրոնից կառավարել: Օգոստոսի 11ին Տամլաճըգում գումարուած ժողովը թելադրել էր միւս երկու վայրերի ժողովուրդին հաստատուել այնտեղ՝ ծովեզերքը թշնամու առաջ չթողնելու համար:

Տամլաճըգում, տեղական ժողովների միաւորումով, կազմուել էր ընդհանուր վարչական մարմին, դիմադրութեան գերագոյն իշխանութիւն իրականացնելու համար: Այդ մարմնի ատենապետութիւնը վստահուել էր Տիգրան Անդրէասեանին, ատենադպրութիւնը Միքայէլ Կէկէճեանին, ժողովականներն էին եղել՝ Հեթում Ֆիլեան, Սահակ Անտէքեան, Հաճի Խաչէր Մարտիրեան, Յովնան Իսքէնտէրեան, Իսքէնտէր Քէլէմեան, Ծապրա Գազանճեան, Պօղոս Գապայեան, Յովհաննէս Գոպուրեան, Մովսէս Տէր Գալուստեան, Մելքոն Գույումճեան, Գրիգոր Թովմասեան, Եսայի Իպրահիմեան, Սիմոն Շէմմէսեան եւ Թովմաս Ազատեան:

Վարչական մարմինը «Սէվգիյաթ Րէիսի», առաքման տնօրէն էր կարգել Մովսէս Տէր Գալուստեանին, որի երկու օգնականներն էին եղել՝ Սերոբ Շէրպէթճեան եւ Տիգրան Գարաճեան: Այս գրութեան մէջ յիշատակելու եմ դիւցազնամարտի մասնակիցների անունները, որպէսզի նրանց շառաւիղները հպարտ զգան իրենց նախնիների քաջագործութիւններով եւ վերջապէս պատմութիւնից պէտք չէ դուրս թողնել այն կերտողները: Առաջուայ նման կռուողները բաժանուել էին տասնապետութիւնների, որոնք բաղկացած էին եղել 43 տասնեակներից ու նոյն թւով տասնապետներից:

Անցեալ մարտերի փորձառութիւնը թելադրել էր ստեղծել Չէթէյեան կազմակերպութիւն: Լեռնականների զինուորական գործունէութեան շրջանակը ամբողջ Մուսա Լերան 70-80 քառակուսի մղոն տարածութիւնն էր ընդգրկել, որ շատ ընդարձակ էր պաշտպանութիւն իրականացնելու համար: Կարեւոր դիրքերի վրայ մի քանի տասնեակները չէին կարող թշնամի բանակները զսպել, նահանջի հարկադրանքի դէպքում մինչեւ կեդրոնի զօրանոցը օգնական ուժեր հասցնէր, թշնամին կարող էր առաջընթաց ապահոված լինել: Այդ անպատեհութիւնը կանխելու համար 33 հոգիներէ բաղկացած երեք Չէթէյական խումբեր էին ստեղծուել՝ առանձին խմբապետների հրա-

*Շար.ը էջ 19*

**ՔԱՋ ՆԱԶԱՐ**

**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԾՕ**

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 11:00-ից 1:00
Կլէնտէյլի 26-րդ կայանից
Ձեր բոլոր հարցերին կը պատասխանի
քաջաբար քաջերի քաջ՝ »Քաջ Նազար«ի
խմբագիր՝ Յովհաննէս Բալայեան
առանց վախի ու փափախի

# «ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ ԻՐ 26-ՐԴ ՅԱՂԹԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՆ ՍԵՄԻՆ

*Շարունակուած էջ 1-էն*

Պատահած է, որ հարց տանք հայ բարձրագոյն դպրոցներէ շրջանաւարտներէն շատերուն, թէ ինչո՞ւ հայերէն թերթ չեն կարդար: Տանք կարգ մը պատասխաններ, առանց մեկնաբանելու ըսուածները, « Ձենք հասկանար գրուածը»: Կամ՝ «հետաքրքրական բան չկայ մէջը»: Կամ՝ «Դուք միշտ կռիւի մէջ էք իրարու հետ ձեր թերթերէն ներս»: Կամ՝ «Կը գրէք միշտ նոյն նիւթերու մասին»: Իսկ հիմնականը՝ երբ հարց կուտանք, թէ «ի՞նչ գրենք, որ հետաքրքրէ ձեզ», տրուած պատասխանը միանշանակ է. «Ձեմ գիտեր», որուն կը զուգորդուի ուսի շարժումը...

Կ՛ըմբռնենք. իրենք պէտքը չունին գիտնալու: Անիկա գիտնալը մե՛ր պարտականութիւնն է: Իսկ մենք, գիտնալու պէտքը չենք ունեցած, երբե՛ք: Միշտ շրջանցած ենք նման ընդհանրական բնոյթի հարցեր: «Մասիս» , իր 26-րդ տարուան սեմին, իր ունեցած կարելիութիւններուն սահմաններուն մէջ, կ՛առաջադրէ լրջօրէն հետապնդել այդ սխալը՝ դրական ելքի մը անժամանցելի ակնկալութեամբ,

Հայ նոր սերունդները հայ գիրին ու մամուլին կապելու անհրաժեշտութիւնը կը զգենու աւելի քան երբեք ստիպողական հանգամանք, զոր լուրջ ուշադրութեան կը յանձնենք նաեւ մեր ազգային իշխանութիւններու, կրթական հաստատութիւններու հոգաբարձու ժողովներու եւ յարգարժան տնօրէններու խստաբարոյ ուշադրութեան:

«Մասիս», ընդհանրապէս քոյր մամուլի շարքին, նիւթական ծանր տագնապներ բոլորեց ու կը բոլորէ՝ շատ յաճախ մատնուելով յուսահատական վիճակներու: Ուստի, իր 25-ամեակի բարեբաստիկ առիթով, «Մասիս» առաջադրեց իր ուժերը կրկնակի վերալարել, կարենալ մասամբ մը բարելաւելու համար իր ֆինանսական շատ յաճախ անել պայմանները: Ասոր համար ան առաւելապէս կ՛ապաւինի զինք գնահատող, իրմով խանդավառ, այլապէս բարոյապէս ու նիւթապէս տեւաբար իրեն սատար կանգնող գաղափարական, համակրական ու բարեկամական իր շրջանակներուն վրայ, որոնց եւ կը պարտի իր յարատեւութիւնն ու անխաթար հրատարակութիւնն այսօր՝ լրիւ երկուքուկէս տասնամեակէ իվեր:

Կ՛արժէ լայն փակագիծ մը բանալ այստեղ մեծ տառերով շնորհակալութիւններ յայտնելու այն բոլոր մեծ ու փոքր նուիրատուներուն, որոնք առիթը չեն փախցներ իրենց բարոյական եւ նիւթական զօրակցութիւնն ու նպաստը մուծելու «Մասիս» ի ֆօնտին:

«Մասիս» առաջադրեց նաեւ կրկնապատկել իր աշխատանքը, ըստ հնարաւորի իր շուրջ համախմբելու համար գաղութիս վաստակաշատ մտաւորականութիւնը՝ կարենալ օգտուելու համար անոր թերթիս բերելիք շնորհակալ աշխատակցութենէն:

Այս քայլին միտք բանին, անշուշտ, կը հանդիսանայ նոր զիտեկիքներով առաւելագոյնս լուսաւորել ընդհանրապէս մեր գաղութը եւ մեր ընթերցասէր հասարակութիւնը, մասնաւորապէս:

Մեր ակնկալութիւնն է գաղութն ու ընթերցասէր հասարակութիւնը քաջալերել, շահագրգռել եւ կապել մեր ժողովուրդի դիմագրաւած այժմէական խնդիրներուն: Առնչել զիրենք մեր ազգի ժամանակակից հիմնահարցերուն: Քայլ պահել տալ այդ հիմնահարցերուն արձանագրած վերիվայրումներուն, զարգացումներուն, լուծման գործընթացներուն, անոնց սպառնացող հանգամանքներուն հետ:

Ոչ մէկ հայ անհատ պէտք է անմասն մնայ, մերօրեայ հայրենական իրադարձութիւններէն:

Ոչ մէկ հայ անհատ պէտք է անտարբեր մնայ ազատագրեալ Արցախի դիմագրաւած խնդիրներուն հանդէպ, թող որ ապրէր իր հայրենիքէն հազարաւոր մղոններ հեռու:

Մենք, իբրեւ գաղափարական կազմակերպութիւն, գլխաւոր խմբագիր, խմբագրական կազմ եւ վարչական մարմին՝ ուրախ, քաջալերուած, երախտապարտ եւ շնորհակալ ենք հանդէպ մեր այն բոլոր աշխատակիցներուն, որոնք իրենց սուղ ժամերէն անսակարկ բաժին կը հանեն, «Մասիս»ին, հարստացնելով անոր սիւնակները: Ասիկա մեծ ծառայութիւն մըն է, զոր կը մատուցեն մեր գաղութին, հայրենիքին, հայ մշակոյթին, հայու լինելութեան պայքարին:

«Մասիս»ի կեանքին մէջ անցնող ամէն մէկ տարի, հայ ժողովուրդի հասցէին արձանագրուած յաղթանակ մը հանդիսացաւ յիրաւի: Հայ մամուլի գոյութեան պահպանումը երաշխիք է զայն ծնող, սնուցող եւ ուռճացնող իր փառապանծ ժողովուրդին գոյութեան պահպանման, կայտառութեան ու յառաջընթացին: Այդ յաղթանակին հասնելու համար իր դիմագրաւած բազում տագնապները ոչինչով թուլցուցին իր գիտակցական զոհողութեան ոգին, որ իր ներշնչման աղբիւրը հանդիսացաւ բոլոր ժամանակներուն:

Բարի խոյանք «Մասիս»ին, իր լոյս ընծայման 26-րդ յաղթական սեմին:


## «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ**

**CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ**
**(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)**
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00



مطعم الشرق

WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT
*"Where the East Meets the West"*

**MEDITERRANEAN - LEBANESE FOOD**

**BANQUET HALL**
**CATERING FOR ALL OCCASIONS**

**FAMILY ENTERTAINMENT**
**EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW**




NAZO, VARTAN, AMIR & SINGER MUHAMMAD

**CALL FOR RESERVATIONS**
**TEL 626-281-1006 626-587-1048**
**FAX 626-281-3641**

**910 E. MAIN ALHAMBRA, CA**



BELLY DANCING

PHOTO/CONCEPT-J/D-2005 TEL (6260 795-4493

# ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

*Շարունակուած էջ 5-էն*

դուստրերը: Այցելէք կենտրոնի համացանցային կայք, եւ կը ծանօթանաք հիմնադրման պահից ի վեր կենտրոնի բոլոր հովանաւորների ու բարերարների անուններին: Միաժամանակ նկատենք, որ Ձեր հարցի մէջ ակնյայտ շփոթմունք կայ. Յովհաննիսեանն այն մարդկանցից չէ, ովքեր հայրենասիրութիւն խաղալով՝ աչք են տնկում դրսից եկող գումարների վրայ: Սակայն նրա տառապանքը փորձ ունի. «Հայաստան» հիմնադրամում աշխատած տարիներին հասկացել է, թէ «նշանակողն» ինչ է ակնկալում «նշանակուողից»: Հասկացել է, զարմացել ու հեռացել: Իսկ կենտրոնի ֆինանսական հաշուետուութիւնների մասին՝ եթէ այդքան հետաքրքրուած էք, կարող էք տեղեկանալ դարձեալ Ձեր յաճախակի այցելած աշխատասենեակներից, որտեղ դրանց պատճէնները վստահաբար կան:

**10. Ի՞նչ ճանապարհով էք Հայաստան ներկրել Ձեր ազնուափայլ տիկնոջ զարդերը:**

Րաֆֆի Յովհաննիսեանը զարդեղէն երբեւէ չի ներկրել: Իսկ ինչ էլ բերել է՝ միշտ օրինական ճանապարհով: Սակայն աւելի հետաքրքիր թեմա կը յուշենք՝ ինչպէս Հայաստանից դուրս բերել ոսկեղէն ու թանկարժէք քարեր: Միանգամից ասենք, որ բարձրագոյն ղեկավարութեան մէջ կան պաշտօնեաներ, որոնք այդ հարցում լուրջ եւ փորձառու մասնագէտներ են, հմտացած են այլ երկրներում, մայր ցամաքներում ոսկերչական ու ադամանդագործական տնտեսութիւն վարելու մէջ: Այ, նրանց փորձն ու խորհուրդները կարող են օգտակար լինել Ձեզ համար:

**11. Դուք իսկապէս հաւատացա՞ծ էք, որ Ձեր ազնուափայլ տիկնոջ ղեկավարած «Օրրան» կազմակերպութիւնը բարեգործական է: Ենթարկուե՞լ է երբեւէ այդ կազմակերպութեան ֆինանսական գործունէութիւնը անկախ աուդիտորական քննութեան:**

Հարցին աւելի լաւ կը պատասխանեն այդ հաստատութիւնում ապաստանած, յանուն բարձրաստիճան «այրերի» անձնական շահերի՝ նրանց կամակատարների հրահանգով կամ անհրահանգ փողոց շպրտուած «իսկական» երեխաներն ու ծերերը: Սոյն նամակին կից ուղարկում ենք այդ մարդկանցից մէկի կողմից վերջերս Ազատութեան հրապարակի հարթակ փոխանցուած գրութեան պատճէնը: Կարող էք հանգիստ քնել՝ «Օրրանն» ամէն տարի պատուիրում եւ անցնում է աուդիտորական հաշուետու քննութիւն: Մինչ օրս այն իրականացրել է «KPMG» հեղինակաւոր կազմակերպութիւնը: Ի յաւելումն՝ մեր երկրի հարկային մարմինները եռամսեակը կամ տարին մէկ անգամ Ձեր ասած՝ «անկախ աուդիտորական քննութեան» են ենթարկում բոլոր տնտեսվարող սուբյեկտներին: Չլինի՞ Դուք կասկածում էք նրանց անկախ գործունէութեանն ու անաչառութեանը:

**12. Վերոնշեալ կազմակերպութեան բիւջէի քանի՞ տոկոսն են կազմում Ձեր ազնուափայլ տիկնոջ աշխատավարձը եւ անձնական նպատակներով ծախսուող գումարները:**

Զրօ տոկոսը: Յայտնենք աւելին՝ նա ներդրողներից մէկն է: Հետեւապէս՝ նրա արածը, մի գուցէ համեստ, բայց բարեգործութիւն է:

**13. Ինչպէ՞ս էք գնահատում Ձեր գործունէութիւնը «Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրէնի պաշտօնում: Կարո՞ղ էք նշել գոնէ մէկ գործ, որ արել էք այդ պաշտօնում:**

Կրկնենք՝ հիմնադրամը բարելաւելուն միտուած Րաֆֆի Յովհաննիսեանի ներկայացրած ծրագիրը կարող եք ձեռք բերել վերը յիշատակուած աշխատասենեակներից, իսկ այդ ծրագրի շատ նպատակների չիրականացման խոչընդոտների հեղինակին՝ փնտռել նախագահական նստավայրում: «Հայաստան» հիմնադրամում իր կարճատեւ պաշտօնավարութեան ընթացքում Րաֆֆի Յովհաննիսեանը, եթէ յիշում էք, կարողացաւ բազմաթիւ երկրներում ունեցած մեծ հեղինակութեան ու վստահութեան շնորհիւ ետ բերել միլիոնաւոր տոլարներ, որոնք սառեցուել էին անցման շրջանի ճգնաժամի պատճառով: Եւս մէկ միլիոն հայթայթուեց, որն օգտագործուեց Արցախում եւ Սպիտակի երկրաշարժի գօտում Հիմնադրամի ծրագրերն իրականացնելիս:

**14. Տեղեա՞կ էք արդեօք, թէ ի՞նչ է մտածում Ձեր մասին հանրութիւնը:**

Տեղեակ ենք: Րաֆֆի Յովհաննիսեանն առաւել եւս տեղեակ է, քանի որ շրջում է առանց «ախրանների» ու «պադվատների» եւ յաճախակի է հանդիպում «ոչ կազմակերպուած», «չհսկուող» (առաջին եզրը պաշտօնակատարինն է, երկրորդը՝ Ձերը) լայն հանրութեան հետ:

**15. Տեղեա՞կ էք արդեօք, թէ ինչպէ՞ս են անուանում Հայաստանում այն մարդկանց, ովքեր, զրկուելով պաշտօնից, դառնում են ընդդիմադիր:**

Դուք ասացիք՝ ընդդիմադիր: Կամ, ինչպէս ընդունուած է ամբողջ աշխարհում, անուանում են նախկին՝ «էքս» նախածանցով: Յովհաննիսեանին յաճախ պատւում են նաեւ Հայաստանի առաջին արտգործնախարար անունով: Հազարաւոր մարդկանց շրջանում, որոնց հետ նա եւ մենք պարբերաբար շփւում ենք, այլ եզրաբանութեամբ խօսող գրուցակիցներ չունենք:

**16. Համարձակուե՞լ է արդեօք մինչ օրս որեւէ մէկը ձեր շրջապատից կասկածել, որ Դուք ազգի փրկիչն էք:**

Մեր գործընկերներից չկայ մէկը, որն իր կամ երկրի փրկութիւնը կապի անձի, բացառիկ ինչ-որ մէկկի հետ եւ հոգով ու մարմնով նուիրաբերուի նրան:

**17. Եթէ նախորդ հարցի պատասխանը դրական է, հրապարակէք, խնդրեմ, այդ բժշկի անունը:**

Դրական չէ:

**18. Որպէս ՀՀ նախկին արտգործնախարար, կարո՞ղ եք հետագայում գործել այնպէս, որպէսզի չվարկաբեկուէք վերջնականապէս:**

Շնորհակալ ենք, որ մտահոգուած եք Րաֆֆի Յովհաննիսեանի վարկանիշը պահպանելու առումով: Չլինէր Յովհաննիսեանի վարկանիշի աճը, վերնախաւը հիստերիայի մէջ չէր ընկնի, աւելին՝ լրտեսական թեմաներով երազախաբ չէր լինի:

**19. Ակնկալո՞ւմ էք արդեօք գրանցուել Գինեսի գրքում՝ որպէս Երեւանի Թատերական հրապարակում բաւական երկար կանգնած մարդ:**

Ոչ: Գինեսի գրքում գրանցուելու փափաքը, եթէ ուզում էք ճիշտն իմանալ, յայտնի շուրջպարի կազմակերպման, նաեւ դրանից դուրս ձախողուած, «միսիոներական փոշով» պատուած այլ մարդկանց ու նրանց զինակիցների հոգում է: Սակայն չտխրենք. մեր երկրում էլ կան մարդիկ, ովքեր տարբեր ասպարէզներում, զորօրինակ՝ մեծաթիւ սպանութիւնների առնչուելու, դրանք չբացայայտելու, վագրաթուիչք տնտեսական աճեր գրանցելու, ընտրութեան արդիւնքների կամ հանրաքուէի մասնակիցների թուանկարչութեան, «ազգափրկիչ» գործունէութեան ֆանտաստիկ պատրանք ստեղծելու ռեկորդակիրներ են, եւ վաղ թէ ուշ կը յայտնուեն համաժողովրդական ցասումի «սեւ» գրքում:

**20. Մեղսունա՞կ էք արդյոք:**

Ի տարբերութիւն չգիտակցողների, մենք գիտակցում ենք մեր կատարած բոլոր քայլերի, արած յայտարարութիւնների պատասխանատուութիւնը եւ, ի բարեբախտութիւն մեր ընտանիքների ու ազգի, մեղսակից չենք որեւէ յանցագործութեան կամ դրա պարտակման: Մենք տեղեկացուած ենք, որ «պատասխանի, արձագանքի կամ որեւէ վերաբերմունքի դէպքում կը լինեն անակնկալներ», եւ այս 21 հարցերին «բովանդակային բացայայտումներ» են սպասւում: Աստծոյ սիրոյն, բացայայտէք Ձեր եւ մեր միացեալ 42 հարցադրումների հետեւում թաքնուած բոլոր մութ պահերը:

**21. Հաւատո՞ւմ էք Ձմեռ Պապի գոյութեանը:**

Ուզում ենք, որ բոլորը հաւատան, եւ առաջին հերթին՝ մանուկներից մինչեւ մանուկ մնացած մեծերը: Ուզում ենք, որ Նոր տարում Ձմեռ պապը «գիտակցութեան յեղափոխութիւն» բերի: Որ բոլորը առողջ նայեն կեանքին, իրականութեանը եւ «իսկական» կեանքում զբաղեցնեն այն տեղը, որին արժանի են:

*«Ժառանգութիւն» Կուսակցութեան Լրատուական Ծառայութիւն*

Հ.Գ. Մենք մեզ համարում ենք բարձր յանձնառութեան յայտ ներկայացնող քաղաքական ուժ եւ արժանապատիւ քաղաքացու՝ Րաֆֆի Յովհաննիսեանի զինակիցները, ուստի պատրաստ ենք պատասխանելու մեզ ուղղուած ցանկացած հարցի: Սպասում ենք, որ բարձր յանձնառութեան տակ թաքնուողները նոյնպէս մեր եւ այլոց հարցերին կը պատասխանեն ամենայն լրջութեամբ՝ առանց որակումների:

# «ԹՌՉՆԱԿՌԻՓ» ԵՒ ՄԱՍԱՄԲ ՆՈՐԻՆ

*Շարունակուած էջ 6-էն*

ռող թռչնային այս «հարբուխ»ը իր մահացու փոփոխութիւններով, հասնի Ամերիկա, (մասնագէտներ կը հաւատան որ այս պիտի պատահի) տասնեակ միլիոնաւոր մարդիկ պիտի վարակուին անկէ, եւ Ամերիկան ինքզինք պիտի գտնէ նմանը չտեսնուած աղէտի մը առջեւ, շատ աւելի լուրջ քան Քաթրինան եւ միւս փոթորիկները:

Հիւանդանոցային հաստատութիւնները պիտի խեղդուին հիւանդներու գրոհին առջեւ: Ամերիկայի արդէն իսկ խոցելի առողջապահական դրութիւնը անկարող պիտի ըլլայ աղէտը դիմագրաւելու: Համաճարակը կարիքը պիտի ունենայ մասնագէտներէն մինչեւ հիւանդանոցային սարքաւորումները, ապահով արեան ներարկումները եւ այն բոլորը որ անհրաժեշտ են աղէտը դիմագրաւելու համար:

Ամերիկան ներկայիս ունի 965,000 հիւանդանոցային պատրաստ մահճակալներ, որոնց մեծ մասը պիտի գրաւուին հիւանդներու կողմէ: Հարկ եղած արեան պահեստները գոյութիւն չունին: Անձնակազմը անծանօթ պիտի ըլլայ համաճարակի ախտանշաններուն: «H5N1» ժահրը կը յարձակի թոքերուն վրայ, սակայն կրնայ ցատկել աղիքներէն եւ ուղեղէն ներս, քոմայի առաջնորդելով ենթական: Բժշկական անձնակազմը ինք եւս կրնայ վարակուիլ վիրուսով:

Հակավիրուսային դեղերը, հիմնականին մէջ «Tamiflu» կոչուող, բաւարար չեն ներկայիս: Անոնք պէտք է ապսպրուին Զուիցերիայէն, «Ռոշ» ընկերութեան մօտ: Ներկայիս Ամերիկան բաւարար «Tamiflu» դեղ ունի 2.3 միլիոն մարդկանց համար: Անհրաժեշտ պահեստի պէտք կայ 20.30 միլիոն մարդոց համար:

Բացի այս դեղէն, թռչնակռիփի դէմ պայքարի երկրորդ միջոցը յատուկ պատուաստն է (vaccine), որ մինչեւ 2007-2008 շրջանին պէտք է պատրաստ ըլլայ, 100 միլիոն մարդոց համար: Դժուար պատրաստուելիք պատուաստ մըն է այս, որ Ֆրանսայէն պէտք է գայ:

Հասկնալիօրէն, եթէ Քաթրինայի պարագային, Պուշի իշխանութիւնը, անակնկալի գալով, իր պակասութիւններուն համար քննադատուեցաւ, թռչնակռիփի պարագային չի կրնար շեշտել անակնկալի հանգամանքը: Պուշ, Ամերիկայի առողջապահութեան պատասխանատուները, Քոնկրէսը, որ 400 միլիոն յատկացուց կացութեան դիմագրաւման համար, իրապէս մտահոգ են այս համաճարակի Ամերիկա հասնելու կարելիութեան առջեւ: Հարցումներ շատ կան, որոնք կը վերաբերին թէ հիւանդութեան, թէ անոր ծագման եւ տարածման, եւ թէ մանաւանդ այն միջոցներուն որոնք անհրաժեշտ են աղէտը դիմագրաւելու համար: Երկրի իշխանութիւնը, մանաւանդ այս պարագային, չի կրնար պնդել թէ «անակնկալի» եկաւ: Գաղթական վայրի թռչնազգի թռչունները իրենց պտոյտներու ընթացքին, հաւանաբար գարնան, անպայման մեզի պիտի յիշեցնեն թռչնակռիփի հաւանականութիւնը, եւ ուզենք կամ չուզենք պիտի պարտադրուինք դիմագրաւել զայն...

Ձեր Ծանուցումները վստահեցէք
«Մասիս» շաբաթաթերթին

# «ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ»

*Շարունակուած էջ 6-էն*

*խոստումները, ջնջուեց Թուրքիան հին ու փոքրիկ Պոնտոսի չափով ձեւելու որոշումը եւ փոխարէնը ծնունդ տրուեց արդի Թրքական Հանրապետութեան: Անգլիայի, Ֆրանսայի ու ԱՄՆ-ի համար Թուրքիան դարձաւ Արեւելքը պոլշեւիկեան վտանգից փրկող պատուար, հակապոլշեւիկեան բերդ: Պոլշեւիկեան Ռուսաստանի համար այն ընդունուեց որպէս յեղափոխական եւ հակագաղութատիրական Արեւելքի դրօշակակիր: Արեւմուտքում Հայերի Ցեղասպանութիւնը դարձաւ ենթադրեալ, իսկ պոլշեւիկեան աշխարհում այդ մասին ակնարկողները հանգրուանեցին Սիպիրում:*

*Հայերի Ցեղասպանութեան իրողութեան պատմագիտական, իրաւագիտական, դիւանագիտական ու քաղաքական երեսների քննարկումն ու լուսաբանութիւնը արգելակող ու այդ ճանապարհով Հայկական Հարցի լուծումը բացառող բերդը, Մեծ տէրութիւնների հզօրութեամբ կանգնած ու պահուող այդ բերդը աստիճանաբար սկսեց քանդուել վերջին տասնամեակների ընթացքում: Այդ մեծ իրադարձութեան մէջ վճռորոշ նշանակութիւն ունեցան ներքոյիշեալ երեւոյթները:*

*Մեծ պետութիւնների կողմից Հայերի Ցեղասպանութեան ու Հայկական հարցի արգիլուած կամ մերժուած կամ թէական հռչակելը չատերի, մանաւանդ Թուրք հեղինակների, կողմից ներկայացուեց որպէս իրողութեան, փաստի, բուն ցեղասպանութեան հերքում: Յայտարարւում էր, որ կամ Հայերի Ցեղասպանութեան հաստատման համար բաւարար հիմքեր չկան եւ կամ էլ այն հնարովի է, կեղծ է: Այսպէս, ուժի ու շահի քաղաքականութիւնը լուծեց պատմական լուրջ հարցեր առանց որեւէ գիտական հիմնաւորման ու փաստարկման: Սակայն, եթէ քաղաքականութիւնն ու դիւանագիտութիւնը այս կամ այն պետութեան կամ քաղաքական մարմնի շահերի պաշտպանումն ու արդարացումն է, ապա գիտութիւնն ու գիտնականները նուիրուած են ճշմարտութեան բացայայտման: Այն ազգային սահմաններ չի ճանաչում եւ խորքով համամարդկային է: Գիտութեան նուաճումները աստիճանաբար ուժի ու շահի քաղաքականութիւնը աստիճանաբար դուրս մղեցին պատմագիտական հարցեր լուծելու նրա անարդարացիօրէն նուաճած իրաւասութիւնից:*

*Աշխարհի շատ երկրներում հիմնադրուեցին ու սկսեցին եռանդուն կերպով աշխատել ցեղասպանագիտական ամբիոններ, ինստիտուտներ ու կենտրոններ: Նրանց ուսումնասիրութիւնները սկսեցին հաստատել Թուրքերի կողմից կազմակերպուած հայերի ցեղասպանութեան իրողութիւնը: Նրանք նաեւ ցոյց տուին, որ Մեծ տէրութիւնների դիւանագիտական ու պատմական դիւաններում պահուող փաստաթղթերը հակադրւում են գործող իշխանութիւնների հարցադրումներին: Այս հիման վրայ Մեծ տէրութիւնները հարկադրուած եղան փոխելու իրենց ձեւակերպումները: Նը-րանք սկսեցին պնդել, որ իրենք Թուրքերի կողմից հայերի զանգուածային ջարդերի ու ցեղասպանութեան մասին չեն ցանկանում խօսել, քանի որ Թուրքիան իրենց հաւատարիմ զինակիցն է: Որքանով նրանց Թուրքիայի մատուցած ծառայութեան իմաստն ու արժէքը փոքրացաւ, այնքանով Մեծ տէրութիւնների օժանդակութիւնը, պաշտպանութիւնը թուլացաւ: Այլեւս Մեծ տէրութիւնների թրքանպաստ նման յայտարարութիւնները չեն մեկնաբանւում որպէս հայերի ցեղասպանութեան փաստի հերքում: Այս ստիպեց Թուրքիային նոր պաշտպանութիւն եւ ստրատեգիա որդեգրել:*

*Գիտութեան մեր դարում, երբ ամէն մի ասպարէզի տնօրինում եւ ղեկավարում վերապահւում է գիտութեան, խաւարամիտ կոչեր են հնչում պարտուող որոշ քաղաքական ուժերի կողմից: Երբ հրամայական է նկատւում իմացութեան ամէն մի ճիւղի եւ ամէն մի գործնական աշխատանքի միասնութիւնը գիտութեան հետ, որոշ քաղաքագէտներ ձգտում են սեպ խրել գիտութեան ու քաղաքականութեան միջեւ, քանի որ գիտական նոր դրոյթները չեն հաստատում հին դիւանագիտութեան ու քաղաքականութեան դրոյթները, ուժի եւ մենատիրական շահի դրոյթները: Քաղաքական տուեալ միտումի նպատակն է դժուարացնել կամ անհնարին դարձնել գիտական նուաճումները քաղաքականութեան, դիւանագիտութեան ու ընկերային կեանքի ոլորտներում:*

*Գիտութեան ոյժը իր նորարարութեան, բանականութեան, կեանքը բարելաւելու եւ կեանքի առաջընթացը ապահովելու մէջ է: Բայց ինքն իրեն պարտադրել չի կարող առանց համապատասխան ոյժի, ընդ որում իշխանութիւն ունեցող ոյժի, քաղաքական ոյժի: Գիտութիւնը որոշակի ուղղուածութեամբ կազմակերպում է մարդկային իմացական կարողութիւնը եւ այն ուղղում դէպի որոշակի նպատասլաց գործունէութիւն: Այդ գործունէութիւնը իրականացնելու համար անհրաժեշտ է որոշակի դաշտ (իրաւական, քաղաքական, բարոյական, նիւթական, մարդկային ոյժի որոշակի կազմակերպուածութիւն եւ այլն): Այդ գիտութեան տրւում է տուեալ ընկերութեան կողմից, տուեալ քաղաքական կառոյցի եւ ոյժի կողմից: Հասարակութիւնները, քաղաքական կառոյցները նաեւ տարբերւում են ըստ այն բանի, թէ ինչպէս եւ ինչքանով նպաստում են գիտական նորութիւնների գործադրմանը: Նոյնպէս է նաեւ ընկերային կեանքում: Քաղաքագէտը, դիւանագէտը խորանում է տուեալ ասպարէզում կատարուած գիտահետազօտական աշխատանքներին ու դրանց կիրառելիութեան հնարաւորութիւններին եւ որոշում է գործադրել գիտութեան յանձնարարութիւնները: Որոշ արդի քաղաքագէտներ, ի մասնաւորի Թրքամէտներ, նկատելով որ դա իրենց համար ցանկալի չէ քաղաքագէտից պահանջում են հեռու մնալ գիտութիւնից իսկ գիտութեան՝ ընկերային-քաղաքական կեանքից: Նրանք ապագիտականացնում են ընկերային քաղաքական կեանքի ղեկավարութիւնը եւ գիտութեան զրկում կեանքում գործադրուելու հնարաւորութիւնից:*

*Հայերի ցեղասպանութեան հարցերի գիտական ու համապարփակ ուսումնասիրութիւնը արգելակող բերդը քայքայւում է նաեւ ներսից, Թրքական հասարակութեան ինքնատիպ ինքնաճանաչման ու ինքնաբացայայտման ճանապարհով: Ինչպէս տեսանք Թուրք ցեղը հազարաւոր տարիների պատմութիւն ունի, իսկ Թուրք ազգն ու մշակոյթը մօտ մէկ դարուայ: Օսմանեան դարաշրջանում Կայսրութիւնը ազգերի ու ցեղերի մի անկազմակերպ հաւաքածոյ էր միացած Սուլթանական ուժով: Կոտորածների տարիներին, ըստ որում հայերի, յոյների, պուլկարների ցեղասպանութեան օրերին, Կայսրութեան շատ բնակիչներ փոխում էին իրենց ազգութիւնն ու դաւանանքը՝ իրենց գոյութիւնը պահպանելու համար: Թուրք ազգի ձեւաւորման ընթացքում, երբ տարբեր պատճառներով ու եղանակներով տեղի էր ունենում ազգային-կրօնական գիտակցութեան բացայայտ ու գաղտնի սրբագրութիւն, այլ դաւանանք ու ազգութիւն ընդունած նախկին Օսմանցիները վերահաստատեցին իրենց նախկին ազգային ու կրօնական ինքնութիւնը: Այդպիսով, ժամանակի ընթացքում, շատեր վերականգնեցին իրենց քրիստոնէական հաւատն ու ազգային պատկանելութիւնը:: Նրանք սկսեցին աշխարհին պատմել իրենց ու իրենց նախնիների կեանքի ոդիսականը, ջարդերի ու բռնագաղթերի ողջ ողբերգութիւնը: Թուրքերն ու նրանց բարեկամները սկսեցին սարսափել այդ ծաւալուող տարերային շարժման բարոյական, քաղաքական ու իրաւական ուժից: (Տես, "Crypto-Armenians Among Us" Milli Gazete, 12/28/05): Պարզւում է, որ այդ հարցում զգալի դեր խաղում այն քուրդերի զաւակներն ու թոռները, որոնք ժամանակին ծառայել են ազգափոխ ու կրօնափոխ հայերի մօտ ու գիտէին նրանց Պոլսի ազգականների հասցէները:*

*Շղարշուած այդպիսի հայերը աւելի վախ են պատճառում, երբ տարբեր հաստատութիւններ սկսեցին ենթադրութիւններ անել, որ նման վերափոխների թիւը Թուրքիայում այսօր կարող է տատանուել 100.000-ից երեք միլիոնի միջեւ:*

*Պատմագիտութեան զարգացման ու ճշմարտութեան բացայայտման ճանապարհը խափանողների շարքում իրենց պատուաւոր տեղն է գրաւում առաջադէմ Թուրք մտաւորականութիւնը, որն այսօր աշխարհը հիացնում է իր գիտական խորաթափանցութեամբ, լուսամտութեամբ, քաջութեամբ ու մարդասիրութեամբ: Նրանք այն ռահվիրաններն ու հերոսներն են, որոնք Թուրք ժողովրդի պատիւը պիտի փրկեն: Նրանք քաջ գիտակցում են, որ ուշ թէ կանուխ ողջ աշխարհը պիտի ընդունի Թուրքերի կողմից հայերի ցեղասպանութեան փաստը եւ աւելի պատուաբեր են նկատում այն շուտ կատարել, որպէսզի հարկադրուած չլինեն նորանոր ստեր ու կեղծ տեսութիւններ հնարելու:, քանի որ սուտն ու կեղծիքը միշտ ինքնարտադրւում են իրենց: Պատմութիւնը ապացուցել է, թէ անկախ քանի հոգով, ինչպիսի ուժով ու միջոցներով մարդ բղաւում է երկրագնդի տափակութեան մասին, այն չի դադարում կլոր լինելուց:*

## ԵՐԱՆԻ ՆՐԱՆ
### ՍՐԲՈՒՀԻ ԴԱՔԻԹԵԱՆ

*Մարդկային կեանքը*
*Լեցուն մի աշխարհ,*
*Մարդկային կեանքը*
*Ովկիան մի անծայր:*

*Երանի նրան, որ այդ ովկիանում*
*Լողում է հանգիստ,*
*Լողում է հանդարտ*
*Ու չի խորտակւում:*

*Այդ լեցուն կեանքում*
*Բոլորս ենք ապրում*
*Վատ կամ գեղեցիկ՝*

*Երանի նրան*
*Ցետադարձ հայեացք*
*Նետելով կեանքին,*
*Սեւացած էջեր*
*Չի տեսնում այնտեղ՝*

*Երանի նրան*
*Իր ապրած կեանքով*
*Յոյզեր կը շարժի,*
*Սրտեր կը գերի,*
*Իմաստաւորուած*
*Կեանքով գեղեցիկ*
*Հետքեր կը թողնի:*

## ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

*ԱՆԳԻՆԷ ԱԶԱՊԱՀԵԱՆ շրջանէ մը ի վեր հիւանդ ըլլալով վերջերս տուն վերադարձած է կազդուրման համար: Հ.Մ.Մ.ի Տիկնանց Օժանդակ Մարմինը շուտափոյթ ապաքինում կը մաղթէ ժրաջան անդամուհիին:*

Jessica Demirdjian
REALTOR

Prudential

California Realty
9878 Hibert Street
San Diego, CA 92131
Bus 858 653-6400 Fax 858 653-6440
Cell 619 846-7738 jessicad@prusd.com

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ
(626) 797-7680 (626) 398-0506

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*ԱԶՆԻՒ ՍԱՂՐԵԱՆ*

*Հանգուցեալ **ԱԶՆԻՒ ՍԱՂՐԵԱՆ**ի մահուան քառասունքին առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 29 Յունուար, 2006, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:*

*Հոգեճաշ պիտի մատուցուի Հ.Մ.Մ.ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ, 1060 N. Allen փողոց:*

*Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Այսու կու գանք յայտնելու մեր խորին շնորհակալութիւնները բոլոր այն կազմակերպութիւններուն եւ անհատներուն, որոնք իրենց ներկայութեամբ, ծաղկեպսակով, հեռաձայնով եւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններով մասնակցեցան մեր սուգին՝ **ԱԶՆԻՒ ՍԱՂՐԵԱՆ**ի մահուան առիթով:*

*ՔԷՕՐՈՂԼԵԱՆ ԵՒ ԵԱՓՈՒՃԵԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

***ԱԶՆԻՒ ՍԱՂՐԵԱՆ**ի մահուան եւ քառասունքի տխուր առիթներով, Տէր եւ Տիկին Վարդան եւ Ծովիկ Քէօրօղլեաններ $200 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

***ԱԶՆԻՒ ՍԱՂՐԵԱՆ**ի մահուան եւ քառասունքի տխուր առիթներով, Տէր եւ Տիկին Տիրան եւ Մարգրիտ Ճէրէճեան իրենց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկին Վարդան եւ Ծովիկ Քէօրօղլեաններուն եւ Տիկին Ռուբինա Եափուճեանին: Առ այդ փոխան ցաւակցութեան $100 տոլար կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:*




## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆ*

***ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆ**ի մահուան վեցերորդ տարելիցի առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 29 Յունուար, 2006ին,*

*Ս. Պետրոս Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ,*

*17231 Sherman Way, Van Nuys,*

*յաւարտ Ս. Պատարագի:*

*Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

*Տէր եւ Տիկին Արա Ֆերմանեան*

*Վիգէն Գույումճեան*

## ՉԽԱՄՐՈՂ ՓԱՌՔ...

*Շարունակուած էջ 15-էն*

*մանի ներքոյ: Նրանց կեդրոնը Թաթարալանն էր եղել լերան կեդրոնի գլխաւոր ճակատների ճամբաների միացման վայրը: Ջէթէները այդ տեղից օգնութեան պիտի փութային պահակէտերի դիրքերի տասնեակներին:*

*Ջէթէները լաւագոյն զէնքերն էին կրել, որոնց խմբապետներն էին եղել՝ Եսայի Եաղուպեան, Պետրոս Տմլագեան եւ Պետրոս Տուտագլեան, իսկ Ջէթէները Առաքել Պըրգէլեան, Գէորգ Գըլըճեան, Մանուկ Գըլըճեան, Մարկոս Սնապեան, Սարգիս Ատաճեան, Գրիգոր Խօտիկեան, Խաչեր Տէր Մովսէսեան, Մարտիրոս Հապէշեան, Մարտիրոս Ճանսըզեան, Միհրան Աղամեան, Միհրան Գազանճեան, Մովսէս Եարամաղեան, Պետրոս Աբրահամեան, Պետրոս Գալուստեան, Պետրոս Աղամեան, Սեդրակ Պուրսալեան, սերոբ Կէպէշեան, Տիգրան Իպրահիմեան, Յակոբ Պօյաճեան, Յարութիւն Խօտիկեան, Փանոս Սըգայեան, Կարապետ Սըգայեան, Եսայի Սըգայեան, Թովմաս Այնթապեան, Յակոբ Փէնէնեան, Թովմաս Գէրնէչեան, Պետրոս Սըգայեան, Իսքէնտէր Շըրշեան, Յովհաննէս Աբրահամեան եւ Սերոբ Գապայեան:*

*Տաս-տասներկու տարեկան տղաներից կազմակերպուել էր «Թէլէֆոնի Տղաք» խումբ, որոնց պարտականութիւնն էր եղել դիրքերից թշնամու յարձակումների լուրը հասցնել կեդրոն: Մուսա Լեռցի յանդուգն ու ամուր կանայք ջուր ու ուտելիքի պաշար էին հասցրել դիրքերը, երկանաքարերով հացահատիկը ալիւրի վերածել ու հաց թխել: Շուշան Գապայեան, Վարդիթեր Զէյթլեանը, Ծաղէր Տէր Մովսէսեանը, Սիմա Ղարիբեանը, Մանուշակ Մանուկեանը եւ ուրիշներ, իրենց ամուսինների հետ մասնակցել էին մարտական գործողութիւններին: Տարեցներից ու զէնք չունեցողներից կազմուել էր «Գործաւորներու Վաշտ» միաւորում, որոնք խրամներ էին փորել, դիրքերի դիմացի անտառը հատել, ժայռեր դիզել, որի վերակացուներն էին եղել՝ Յակոբ Քէշիշեան, Ճապրա Գազանճեան, Պետրոս Մարտիրեան եւ Պետրոս Քիւրտեան: Առաքել Կէպէշեան եւ Օհան Փէնէնեան մունետիկներ էին նշանակուել, որոնք իրենց լեռնականի բամբ ձայներով ժողովների հրամանները ու կարգադրութիւնները հաղորդել էին ժողովուրդին: Ռազմամթերքի վերակացու էր նշանակուել Ներսէս Գազանճեանը, որը փամփուշտ, վառօդ ու կապարէ գնդակներ էր ուղարկել դիրքեր եւ պարպուած փամփուշտները լիքցաւորել: Զէնքերը վերանորոգել էին հմուտ դարբիններ՝ Լեւոն Գազանճեան, Միքայէլ Գազանճեան եւ Վանէս Եղեանեան: Օհան Փէնէնեանը բոլոր շուները սպաննել էր, որպէսզի իրենց հաչոցներով չմատնէին բանակատեղին: Վարչական մարմնի որոշումով ամէն օր կենդանիներ էին մորթուել, կռուող մարտիկներին մսամթերքով ուտելիք ուղարկելու համար:*

*Կռուի խարոյկուած ոգին վառւում էր իրենց հոգիներում, սակայն մի բուռ ժողովուրդ ինչքան կարող էր դիմադրել կազմակերպուած տէրութեան բանակներին դէմ: Կատարեալ յաջողութեամբ ընթացել էր պաշտպանութիւնը, սակայն նուազում էր զինամթերքը, ուտելիքի պաշարը սպառում էր: Սնունդի տագնապը մասամբ մեղմելու համար, գիշերային արշաւներ էին կազմակերպել դէպի իրենց պարտէզներն ու արտերը, իրենց արարած բարիքը, իրենց արտերի ցորեանի ծովերի ալիքների վրայ փրփրած հասկերը հաւաքելու: Կէսօրից յետոյ պաշարման գօտին սահմանագլխին մօտենալով, հետազօտել էին նրանց դիրքերը եւ մութ խաւարին ճեղքել այն: Փոքր աղմուկի դէպքում իսկ վախկոտ Թուրքերը խուճապահար անկանոն կրակել էին: Առաւօտեան կանուխ հիւղաւան էին վերադարձել: Սակայն այդ գիշերային արշաւներով հնարաւոր էր արդեօք անընդմէջ ապահովելու իրենց սննդի պահանջը: Սակայն շատեր Թուրքիոյ անկումը մօտալուտ էին համարում եւ պնդում, որ հնարաւոր էր վեց ամիս դիմադրել: Փրկութեան ճանապարհին ծագող լոյսի յոյսի համար ակնկալել էին դաշնակից մի պետութեան ռազմանաւի յայտնուելը՝ լեռը գրկած ծովի ափերին:*

*(Շարունակելի 7)*